

## Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՍՅԱԿԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ


#### ՀՀ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ 2007 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՍՅԱԿՈՒՄ

##### Իրական հատված

2007 թվականի հունվար-հունիս ամիսներին համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) կազմել է 944.8 մլրդ դրամ, ընդ որում, ՀՆԱ-ի իրական աճը կազմել է 11.2%, իսկ դեֆլյատորը՝ 4.9%: Իրական աճի ցուցանիշը ցածր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից 0.6 տոկոսային կետով, իսկ դեֆլյատորը բարձր է 3.1 տոկոսային կետով:

Արձանագրված աճին տնտեսության առանձին ճյուղերի նպաստման չափը բերված է ստորև.

**Առաջին կիսամյակում ՀՆԱ-ի աճին տնտեսության ճյուղերի նպաստման չափը, տոկոսային կետ**




Արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալը 2007 թվականի հունվար-հունիսին նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճել է 1.4%-ով: Ընդ որում, աճ է արձանագրվել հանրագործական և էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում ճյուղում, համապատասխանաբար 1.7 և 7.3 տոկոս: Արտահանվել է իրացված

արդյունաբերական արտադրանքի<sup>1</sup> 36.2%-ը՝ նախորդ տարվա 34.6%-ի դիմաց, ընդ որում, 11.6%-ը՝ ԱՊՀ երկրներ, իսկ 24.6%-ը՝ այլ երկրներ:

Մշակող արդյունաբերության երկու խոշոր ենթաճյուղերում՝ «Սննդամթերքի, ներառյալ խմիչքների, արտադրություն» և «Մետաղագործական արդյունաբերություն» գրանցվել է արտադրության ծավալների աճ, համապատասխանաբար 12.2 և 7.7 տոկոսով: Ծխախոտային արտադրատեսակների արտադրությունում գրանցվել է 5.2% անկում, իսկ քիմիական արդյունաբերությունն աճել է 4%-ով:

Ֆինանսավորման բոլոր աղբյուրներից իրականացված կապիտալ շինարարության ծավալները կազմել են շուրջ 171.4 մլրդ դրամ եւ նախորդ տարվա համեմատ ավելացել 17.2%-ով: Ըստ ֆինանսավորման աղբյուրների իրականացված կապիտալ շինարարության կառուցվածքում բնակչության միջոցները կազմել են 49.1% և նվազել 3.4%-ով, կազմակերպությունների միջոցները՝ 35.3% և աճել 24.5%-ով: Պետական բյուջեի միջոցների հաշվին շինարարության ծավալները կազմել են ավելի քան 18.3 մլրդ դրամ և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել 2.5 անգամ:

Շինարարության ծավալներն ըստ տնտեսության ճյուղերի ունեցել են հետևյալ կառուցվածքը.



2007 թվականի առաջին վեց ամիսների ընթացքում հանրապետությունում տեղի ունեցած շինարարությունը հիմնականում կենտրոնացած է եղել Երևանում (շուրջ 84.6%), իսկ մարզերից առանձնացել է Սյունիքը (4.0%):

Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը 2007 թվականի հունվար-հունիսին նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ նվազել է 1.9%-ով: Սակայն

<sup>1</sup> Ըստ 2100 արդյունաբերական կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների:

աճ է ապահովվել անասնաբուծության ճյուղում, որը 2006 թվականի նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է 3.4%-ով:

### Աշխատանքի շուկա

Ընթացիկ տարվա առաջին կիսամյակում գործազրկության պաշտոնական մակարդակը հանրապետությունում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ կրճատվել է 0.4 տոկոսային կետով և կազմել 7.2% (85.4 հազար մարդ):

2007 թվականի հունվար-հունիսին 2006 թվականի նույն ժամանակաշրջանի նկատմամբ բնակչության դրամական եկամուտները աճել են 26.1%-ով, իսկ դրամական ծախսերը՝ 23.7%-ով, կազմելով համապատասխանաբար՝ 853.8 և 838.8 մլրդ դրամ: Նույն ժամանակաշրջանում բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտներն աճել են 19.9%-ով:

2007 թվականի հունվար-հունիսին միջին ամսական անվանական աշխատավարձը 2006 թվականի հունվար-հունիսին գրանցված ցուցանիշի նկատմամբ աճել է 20.5%-ով, ընդ որում բյուջետային հատվածի աշխատավարձն աճել է 22.1%-ով: Հաշվետու ժամանակահատվածում տնտեսության բյուջետային և ոչ բյուջետային հատվածներում միջին աշխատավարձը համապատասխանաբար կազմել է 52491 դրամ և 88961 դրամ, իսկ միջին աշխատավարձը՝ 71344 դրամ:

### Ֆինանսական հատված

2007 թվականի հունիսի վերջում փողի բազան կազմել է 287.3 մլրդ դրամ՝ տարեսկզբի նկատմամբ աճելով 1.5%-ով: Նույն ժամանակահատվածում գրանցվել է ԿԲ-ից դուրս կանխիկի 6.6%-ով աճ: Արդյունքում կանխիկի տեսակարար կշիռը փողի բազայում տարեսկզբի նկատմամբ աճել է 4.0 տոկոսային կետով՝ կազմելով 84.2%:

2007 թվականի առաջին կիսամյակի վերջում փողի զանգվածը 2006 թվականի դեկտեմբերի 31-ի նկատմամբ աճել է 7.7%-ով: Շրջանառությունում կանխիկն այս ընթացքում աճել է 7.3%-ով, իսկ բանկային համակարգի զուտ արտաքին ակտիվներն աճել են 11.4%-ով, իսկ զուտ ներքին ակտիվներ՝ նվազել 0.4%-ով:

2007 թվականի հունիսին 2006 թվականի դեկտեմբերի համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 103.9%, ինչը 0.4 տոկոսային կետով աճել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշից (104.3%): Սպառողական գների ինդեքսը 2007 թվականի հունվար-հունիսին 2006 թվականի հունվար-հունիսի համեմատ կազմել է 104.5%:

**Ֆինանսական շուկա**

2007 թվականի առաջին կիսամյակում ՀՀ պետական (շուկայական) պարտատոմսերի շուկայում նկատվել է տոկոսադրույքների աճ: Այսպես, եթե 2006 թվականի հունվար-հունիս ամիսների ընթացքում տեղաբաշխված պետական արժեթղթերի միջին եկամտաբերությունը կազմել է 6.13%, ապա 2007 թվականի նույն ժամանակահատվածում այն կազմել է 6.75%: 2007 թվականի առաջին կիսամյակում տեղաբաշխված պետական արժեթղթերի ծավալը կազմել է 18.5 մլրդ դրամ: Հաշվետու ժամանակահատվածում տեղաբաշխված պետական արժեթղթերի միջին ժամկետայնությունը կազմել է 1350 օր՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճելով 186 օրով, ինչը պայմանավորված է հիմնականում երկարաժամկետ պարտատոմսերի տեղաբաշխմամբ:

2007 թվականի առաջին կիսամյակում պետական (շուկայական) պարտատոմսերի նկատմամբ պահանջարկը գերազանցել է թողարկման ցուցանիշը 2.3 անգամ, իսկ տեղաբաշխում/թողարկում հարաբերակցության միջին մեծությունը կազմել է 1.0:

Եթե առևտրային բանկերի մինչև մեկ տարի ժամկետով դրամով տրամադրված վարկերի տոկոսադրույքները 2006 թվականի դեկտեմբերին կազմել էին 17.20%, ապա 2007 թվականի հունվարին՝ 17.01%, իսկ հունիսին՝ 17.68%: Նույն ժամանակաշրջանում գրանցվել է առևտրային բանկերի մինչև մեկ տարի ժամկետով դրամով ներգրավված ավանդների տոկոսադրույքների աճ: Այսպես, եթե 2006 թվականի դեկտեմբերին կազմել է 5.59%, 2007 թվականի հունվարին՝ 5.80%, ապա հունիսին ավանդների տոկոսադրույքը կազմել է 7.63%: Առևտրային բանկերի վարկերը 2007 թվականի առաջին կիսամյակի վերջի դրությամբ կազմել են 306.3 մլրդ դրամ, որի 41%-ը կազմել է արտարժույթով վարկերը: Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներից և ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդները 2007 թվականի առաջին կիսամյակի վերջի դրությամբ կազմել են 329.7 մլրդ դրամ, որից 50.3%-ը արտարժույթով ավանդներն են:

**Ֆինանսական շուկայի տոկոսադրույքները 2007 թվականի առաջին կիսամյակի ընթացքում**

Ամիսներ	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս
Առևտրային բանկերի վարկեր	17.01	17.65	18.35	17.30	18.14	17.68
Առևտրային բանկերի ավանդներ	5.80	5.90	6.03	5.83	6.08	7.63
ՀՀ ԿԲ ռեպո գործառնություններ	4.75	4.75	4.75	4.50	4.50	4.50

**Փոխարժեք**

2007 թվականի հունվար-հունիս ամիսների ընթացքում դիտվել է ՀՀ դրամ/ ԱՄՆ դոլար հաշվարկային փոխարժեքի շարունակական նվազում: Այսպես, եթե հունվար ամսին 1 ԱՄՆ դոլարի դիմաց միջին հաշվարկային փոխարժեքը կազմել է 364 ՀՀ դրամ, իսկ փետրվարին՝ 356 ՀՀ դրամ, ապա հունիսին միջին հաշվարկային փոխարժեքը կազմել է 345 ՀՀ դրամ: Հունվար-հունիս ամիսներին ՀՀ դրամ/ ԱՄՆ դոլար միջին հաշվարկային փոխարժեքը կազմել է 356.70 դրամ, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի փոխարժեքի նկատմամբ արժեքավորվել է 19.6%-ով:


**Արտաքին հատված**

2007 թվականի հունվար-հունիսին արտաքին ապրանքաշրջանառությունը նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի նկատմամբ աճել է 36.5%-ով և կազմել է շուրջ 1892.0 մլն ԱՄՆ դոլար: Ընդ որում, արտահանումը կազմել է 527.0 մլն ԱՄՆ դոլար՝ աճելով 20.5%-ով, իսկ ներմուծումը կազմել է 1365.0 մլն ԱՄՆ դոլար՝ աճելով 43.9%-ով: Ինչպես և առաջին եռամսյակում, կիսամյակի արդյունքներով արտահանման կառուցվածքում նվազել է «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի, թանկարժեք մետաղների և դրանցից իրերի» կշիռը: Ի տարբերություն դրան «Հանքահումքային արտադրանքի» կշիռն արտահանման կառուցվածքում աճել է: Արտաքին առևտրաշրջանառության աճը պայմանավորված էր ներմուծման առաջանցիկ աճով և իր մեծ տեսակարար կշռով ապրանքաշրջանառության մեջ:

**2005 – 2007 թվականներին հունվար-հունիսի ընթացքում արտաքին առևտրի հիմնական միտումներ**

	Ապրանքախմբերի մասնակցությունը ընդհանուր աճում (տոկոսային կետ)		
	2005	2006	2007
<b>Ընդամենը արտահանում, այդ թվում հետևյալ խմբերի հաշին՝</b>	<b>31.7</b>	<b>-0.6</b>	<b>20.5</b>
Պատրաստի սննդի արտադրանք	2.8	-1.0	7.4
Թանկ. և կիսաթանկ.քարերի, թանկ. մետաղների և դրանցից իրեր	6.4	-6.6	7.5
Ոչ թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրեր	28.8	-3.1	11.0
Հանքահումքային արտադրանք	3.7	5.2	2.2
Այլ ապրանքախմբեր	-2.6	4.1	7.4
<b>Ընդամենը ներմուծում, այդ թվում հետևյալ խմբերի հաշին՝</b>	<b>27.0</b>	<b>19.6</b>	<b>43.9</b>
Պատրաստի սննդի արտադրանք	3.1	0.9	3.9
Թանկ. և կիսաթանկ.քարերի, թանկ. մետաղների և դրանցից իրեր	7.5	-5.1	-1.8
Ոչ թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրեր	0.9	4.9	3.0
Հանքահումքային արտադրանք	2.6	4.1	11.9
Այլ ապրանքախմբեր	12.9	15.1	26.9


Առևտրային հաշվեկշռի բացասական մնացորդը կազմել է 838<sup>2</sup> մլն դոլար և նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ աճել 64%-ով: Աճին ամենամեծ նպաստում ունեցած ապրանքախմբերն են՝ «Հանքահումքային արտադրանքը» ու «Մեքենաներ, սարքավորումներ, մեխանիզմներ», «Տրանսպորտի միջոցներ», «Սարքեր և ապարատներ» ընդգրկող խմբի բացասական մնացորդի աճը, համապատասխանաբար 20.1 և 19.6 տոկոսային կետով: Աճին ամենամեծ զսպում ցուցաբերած ապրանքախումբն է՝ «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» խումբը՝ -3.9 տոկոսային կետ<sup>3</sup>:



Հաշվեկշռի բացասական մնացորդի ձևավորմանը նպաստել է հետևյալ արտերկրների հետ առևտրի բացասական մնացորդը՝ Ղազախստան, Ուկրաինա, Ռուսաստանի Դաշնություն, Չինաստան, ԱՄՆ, Ֆրանսիա, Իրան: Առևտրային հաշվեկշիռը դրական էր Նիդեռլանդների, Վրաստանի, Շվեյցարիայի, Իսպանիայի և Լյուքսեմբուրգի հետ (ըստ դրական հաշվեմնացորդի նվազման կարգի):


Բացարձակ արժեքով արտաքին առևտրաշրջանառության դինամիկան 2005-2007 թվականների հունվար-հունիս ամիսներին ներկայացված է ստորև բերված պատկերում:

<sup>2</sup> Ըստ նախնական տվյալների, արտաքին առևտրի հաշվեկշիռը (արտահանումը և ներմուծումը հաշվարկված ՖՕԲ ցներով) կազմել է 666.0 մլն դոլար:  
<sup>3</sup> Գծապատկերում դրական նշանը ցույց է տալիս պակասորդի աճը:



## ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ


2007 թվականի առաջին կիսամյակում ՀՀ պետական բյուջեի եկամուտներն ու պաշտոնական տրանսֆերտները կազմել են ավելի քան 252.2 մլրդ դրամ՝ ապահովելով առաջին կիսամյակի համար նախատեսված մուտքերի 105.9% կատարողական: Ծրագրի գերազանցումն ապահովվել է հարկային եկամուտների, պետական տուրքի և ոչ հարկային եկամուտների հաշվին, մինչդեռ կապիտալի գործառնություններից եկամուտները և պաշտոնական տրանսֆերտները նույն ժամանակահատվածում զիջել են ծրագրված ցուցանիշները:



2006 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ պետական բյուջեի եկամուտներն ավելացել են 30.0%-ով կամ 58.2 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է հարկային եկամուտների աճով: Ընդ որում, հարկատեսակների մեծ մասի գծով արձանագրվել են աճի բարձր տեմպեր: 2006 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ հարկային եկամուտներն աճել են 26.7%-ով կամ 42.4 մլրդ դրամով<sup>4</sup>, պետական տուրքը՝ 11.6%-ով կամ 943.5 մլն դրամով, ոչ հարկային եկամուտները՝ 35.7%-ով կամ 6.2 մլրդ դրամով, կապիտալի գործառնություններից եկամուտները՝ 87.4%-ով կամ 4.7 մլրդ դրամով և պաշտոնական տրանսֆերտները՝ 94.9%-ով կամ 4.0 մլրդ դրամով:


<sup>4</sup> Քանի որ 2007 թվականի պետական բյուջեի եկամուտներում ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության աշխատողների նյութական խրախուսման և/կամ համակարգի զարգացման նպատակային ֆոնդի միջոցները (359.6 մլն դրամ) ներառվել են հարկային եկամուտներում, 2006 և 2007 թվականների ցուցանիշների համադրելիության նկատառումով 2006 թվականի ցուցանիշներում նույնպես նշված միջոցները (403.2 մլն դրամ) ոչ հարկային եկամուտներից տեղափոխվել են հարկային եկամուտներ:





Նշված միտումների արդյունքում բյուջետային եկամուտների կառուցվածքը որոշակի փոփոխություն է կրել ինչպես նախորդ տարվա, այնպես էլ հաշվետու ժամանակահատվածի ծրագրի համեմատ: Մասնավորապես, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ՀՀ պետական բյուջեի եկամուտներում 2.7 տոկոսային կետով նվազել է հարկային եկամուտների և պետական տուրքի տեսակարար կշիռը, իսկ ոչ հարկային եկամուտների, կապիտալի գործառնություններից եկամուտների և պաշտոնական տրանսֆերտների տեսակարար կշիռն աճել է համապատասխանաբար 0.4, 1.2 և 1.1 տոկոսային կետով:


**Պետական բյուջեի եկամուտների կառուցվածքը**



Ինչպես նշվեց, 2007 թվականի առաջին կիսամյակում պետական բյուջեի եկամուտների կառուցվածքը շեղվել է նաև ծրագրված համամասնություններից: Հարկային եկամուտների տեսակարար կշիռը 3.4 տոկոսային կետով զիջել է ծրագրված ցուցանիշը, կապիտալի գործառնություններից եկամուտները և պաշտոնական տրանսֆերտները՝ համապատասխանաբար 0.8 և 0.5 տոկոսային կետով: Ոչ հարկային եկամուտների նույն ցուցանիշը 4.5 տոկոսային կետով գերազանցել է ծրագրային ցուցանիշը: Եկամուտների կառուցվածքի նշված փոփոխությունը պայմանավորված է «Չանգեզուրի պղնձամոլիբդենային գործարան» ՓԲԸ-ի մասնավորեցման գործընթացի արդյունքում գնորդների հետ բացառիկ բանակցությունների վարման իրավունքի դիմաց և «Արմենթել» ՓԲԸ-ի հետ կնքված հաշտության համաձայնության արդյունքում համապատասխանաբար 6.8 մլրդ դրամ և 4.6 մլրդ դրամ վճարումներով, որոնք ծրագրով նախատեսված չէին: Վերջիններս հաշվի չառնելու դեպքում հարկային եկամուտների և պետական տուրքի տեսակարար կշիռը ընդհանուր եկամուտներում 0.4 տոկոսային կետով գերազանցում է ծրագրվածը, ոչ հարկային եկամուտներինը՝ 0.2 տոկոսային կետով, իսկ կապիտալի գործառնություններից եկամուտների և պաշտոնական տրանսֆերտների նույն ցուցանիշները համապատասխանաբար 0.6 և 0.4 տոկոսային կետով զիջում են ծրագրված մակարդակը:


### **Հարկային եկամուտներ**

2007 թվականի առաջին կիսամյակում ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտները կազմել են ավելի քան 201.2 մլրդ դրամ՝ 101.5%-ով ապահովելով ՀՀ կառավարության կողմից իր լիազորությունների շրջանակներում ճշտված ծրագիրը: Նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ, ինչպես նշվել է, պետական բյուջեի հարկային եկամուտների աճը կազմել է 26.7% կամ շուրջ 42.4 մլրդ դրամ: Բոլոր հարկատեսակների գծով արձանագրվել է մուտքերի աճ, բացառությամբ ճանապարհային վճարների և հարկային օրենսդրությունը խախտելու համար գանձվող տուգանքների: Ընդ որում, աճի հիմնական աղբյուր է հանդիսացել ավելացած արժեքի հարկը՝ ապահովելով հարկային եկամուտների աճի 64.5%-ը, այնուհետև՝ շահութահարկը և եկամտահարկը, որոնց հաշվին ապահովվել է հարկային եկամուտների 20%-ը: Համեմատության համար նշենք, որ 2006 թվականի նույն ժամանակահատվածում հարկային եկամուտների աճի 53.3%-ն ապահովվել էր ուղղակի հարկերի հաշվին, 32%-ը՝ ավելացված արժեքի հարկի հաշվին:



2007 թվականի առաջին կիսամյակում ուղղակի հարկերի (շահութահարկ և եկամտահարկ) տեսակարար կշիռը պետական բյուջեի հարկային եկամուտներում նվազել է՝ նախորդ տարվա առաջին կիսամյակի 30.3%-ից մինչև 28.1% և, միաժամանակ, աճել է անուղղակի հարկերի (ավելացված արժեքի հարկ և ակցիզային հարկ) տեսակարար կշիռը՝ 54.7%-ից հասնելով 57.0%-ի:

**Հարկային եկամուտների կառուցվածքը**



Ավելացված արժեքի հարկից հաշվետու կիսամյակում պետական բյուջե է մուտքագրվել ավելի քան 96.8 մլրդ դրամ՝ ապահովելով հարկային եկամուտների 48.1%-ը՝ նախորդ տարվա 43.7%-ի դիմաց: Ավելացված արժեքի հարկի մուտքերից ավելի քան 58.2 մլրդ դրամը ստացվել է ՀՀ սահմանին հարկումից, 38.6 մլրդ դրամը՝ ապրանքների և ծառայությունների ներքին շրջանառությունից: 2006 թվականի առաջին կիսամյակի համեմատ ավելացված արժեքի հարկի մուտքերն աճել են 39.3%-ով կամ ավելի քան 27.3 մլրդ դրամով: Ընդ որում, ներքին շրջանառությունից ստացված մուտքերն ունեցել են

առաջանցիկ աճ՝ 77.2% կամ 16.8 մլրդ դրամ, սահմանին գանձված եկամուտների նկատմամբ, որոնք նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը գերազանցել են 22.0%-ով կամ 10.5 մլրդ դրամով:

2007 թվականին պահպանվել է 2004 թվականից արձանագրված՝ *շահութահարկի* բարձր աճի միտումը: Այս հարկատեսակի գծով պետական բյուջե է մուտքագրվել շուրջ 37.4 մլրդ դրամ՝ ապահովելով հարկային եկամուտների 18.6%-ը՝ նախորդ տարվա 20.6%-ի դիմաց: 2006 թվականի առաջին կիսամյակի համեմատ շահութահարկն աճել է 14.4%-ով կամ ավելի քան 4.7 մլրդ դրամով: Աճը հիմնականում պայմանավորված է ոչ պետական և մինչև 50 տոկոս պետական մասնակցությամբ ձեռնարկությունների, այդ թվում՝ նաև օտարերկրյա ներդրումներով ձեռնարկությունների վճարումների, ինչպես նաև նվազագույն շահութահարկի վճարման պահանջից ելնելով՝ մեկ տոկոս դրույքաչափով վճարված շահութահարկի աճով: Նախորդ տարվա համեմատ ավելացել են նաև մյուս աղբյուրներից ստացված շահութահարկի գումարները, բացառությամբ պետական ձեռնարկությունների վճարումների:

Հաշվետու ժամանակահատվածում *եկամտահարկի* գծով պետական բյուջեի մուտքերը կազմել են ավելի քան 19.2 մլրդ դրամ՝ ապահովելով հարկային մուտքերի 9.5%-ը՝ նախորդ տարվա 9.7%-ի դիմաց: Նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ եկամտահարկն աճել է 24.6%-ով կամ շուրջ 3.8 մլրդ դրամով: Աճը հիմնականում ապահովվել է աշխատանքային և քաղաքացիաիրավական պայմանագրերի կատարումից ստացված եկամուտների աճի հաշվին, որը կազմել է 24.2% կամ 3.5 մլրդ դրամ:

*Ակցիզային հարկն* ապահովել է պետական բյուջեի հարկային եկամուտների 8.9%-ը՝ 2.1 տոկոսային կետով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը: Այս հարկատեսակից հաշվետու կիսամյակում պետական բյուջե է մուտքագրվել ավելի քան 17.8 մլրդ դրամ: Ընդ որում, հանրապետություն ներմուծված ենթակցիզային ապրանքների հարկումից ստացվել է շուրջ 12.4 մլրդ դրամ, որից 5.5 մլրդ դրամը՝ բենզինի ու դիզելային վառելիքի և 5.4 մլրդ դրամը՝ ծխախոտի ներմուծման հարկումից: Հանրապետությունում արտադրվող ենթակցիզային ապրանքների հարկումից պետական բյուջեի ակցիզային հարկի մուտքերը կազմել են ավելի քան 5.4 մլրդ դրամ, որից շուրջ 2.3 մլրդ դրամը ստացվել է ծխախոտի իրացումից: Նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ ակցիզային հարկն աճել է 2.1%-ով կամ 367.8 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է ծխախոտի, բենզինի և դիզելային վառելիքի ներմուծման գծով մուտքերի աճով: Աճել են նաև ներմուծվող ակոհոլային խմիչքների մուտքերը, իսկ տեղական արտադրանքից գանձված ակցիզային հարկի գծով արձանագրվել է մուտքերի նվազում:

2007 թվականի առաջին կիսամյակում պետական բյուջե է մուտքագրվել շուրջ 9.7 մլրդ դրամ *մաքսատուրք*՝ ապահովելով հարկային եկամուտների 4.8%-ը՝ նախորդ տարվա 5.1%-ի դիմաց: Ներմուծման աճի հետ կապված՝ 2006 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ մաքսատուրքի գծով բյուջետային մուտքերն ավելացել են 18.2%-ով կամ շուրջ 1.5 մլրդ դրամով:

2007 թվականի առաջին կիսամյակում գործունեության առանձին տեսակների համար օրենքով սահմանված *հաստատագրված վճարների գծով* պետական բյուջե է մուտքագրվել շուրջ 8.4 մլրդ դրամ՝ ապահովելով հարկային եկամուտների 4.2%-ը՝ նախորդ տարվա 4.4%-ի դիմաց: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ հաստատագրված վճարներն ավելացել են 21.1%-ով կամ շուրջ 1.5 մլրդ դրամով: Վերջինս հիմնականում պայմանավորված է ավտոտրանսպորտային միջոցների գազալցման, ինչպես նաև տրանսպորտային գործունեության, վիճակախաղերի և դրամական շահումով խաղերի կազմակերպման, առևտրի իրականացման վայր կազմակերպելու, ինչպես նաև հանրային սննդի ոլորտներից գանձված գումարների աճով:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել ավելի քան 3.7 մլրդ դրամի *բնօգտագործման և բնապահպանական* վճարներ, որոնք 2006 թվականի միևնույն ժամանակահատվածի համեմատ աճել են 52.8%-ով: Վերջինս հիմնականում պայմանավորված է ավտոտրանսպորտից արտանետվող վնասակար նյութերի համար գանձված եկամուտների աճով: Այն կազմել է 879.1 մլն դրամ՝ շուրջ 6.1 անգամ գերազանցելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Բնապահպանական վճարների վրա դրական ազդեցություն է գործել «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ նոր օրենքը: Մասնավորապես, փոփոխվել են ջրային ավազան վնասակար նյութերի և միացությունների յուրաքանչյուր տոննայի արտանետման համար վճարի դրույքաչափերը, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց պատկանող Հայաստանի Հանրապետությունում հաշվառված և շահագործվող մարդատար և բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներից վնասակար նյութերի արտանետման դիմաց սահմանված դրույքաչափերը: Վերջիններիս նկատմամբ սահմանվել են բազմապատիկ գործակիցներ՝ կախված ավտոտրանսպորտային միջոցների շարժիչների տեսակներից: Միաժամանակ, շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների մասով՝ Հայաստանի Հանրապետություն ներմուծվող տրանսպորտային միջոցների մաքսային արժեքի նկատմամբ սահմանվել են 2, 10 և 20 տոկոս դրույքաչափեր՝ կախված դրանց թողարկման տարեթվից:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջե է մուտքագրվել ավելի քան 4.5 մլրդ դրամ *պարզեցված հարկ*՝ ապահովելով հարկային եկամուտների 2.3%-ը: Նշված

գումարից 2.6 մլրդ դրամը ստացվել է խանութների և կրպակների միջոցով իրականացվող առևտրական գործունեությունից: Նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ պարզեցված հարկն աճել է 30.3%-ով կամ 1.1 մլրդ դրամով:

Հաշվետու ժամանակահատվածում *ճանապարհային վճարներից* պետական բյուջեի մուտքերը կազմել են 776.9 մլն դրամ, որոնք 2006 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են 28.7%-ով կամ 312.1 մլն դրամով:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջե մուտքագրված *հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները* կազմել են շուրջ 1.5 մլրդ դրամ, որից 1.3 մլրդ դրամը կազմել են ռադիոհաճախականության թույլտվության տրամադրման դիմաց կատարված վճարները: Նշված մուտքերի արդյունքում նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարներն աճել են 8.5 անգամ կամ 1.3 մլրդ դրամով:

*Այլ հարկերից* հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջե է մուտքագրվել ավելի քան 1.4 մլրդ դրամ, որոնք 2006 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են 7.7%-ով կամ 119.8 մլն դրամով: Այն պայմանավորված է հարկային օրենսդրության խախտման համար գանձվող տուգանքների, ինչպես նաև ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության համակարգի զարգացման ֆոնդի մուտքերի նվազմամբ:

### **Պետական տուրք**

2007 թվականի առաջին կիսամյակում պետական տուրքի գծով բյուջեի մուտքերը կազմել են շուրջ 9.1 մլրդ դրամ՝ ապահովելով ընդհանուր եկամուտների 3.6%-ը՝ նախորդ տարվա 4.2%-ի դիմաց: Պետական տուրքի փաստացի մուտքերը 12.6%-ով կամ ավելի քան 1.0 մլրդ դրամով գերազանցել են ՀՀ կառավարության կողմից իր լիազորությունների շրջանակներում ճշտված ծրագիրը: Ծրագրի գերազանցումը հիմնականում պայմանավորված է հանրապետությունից օդային տրանսպորտի միջոցներով ֆիզիկական անձանց ելքի, պետական գրանցման համար գանձվող մուտքերի, գործունեության որոշ տեսակների լիցենզավորման, ինչպես նաև հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների իրականացման համար գանձվող տուրքերի աճով: Միևնույն ժամանակ, որոշ տուրքերի գծով արձանագրվել են ծրագրվածից ցածր ցուցանիշներ:

Մասնավորապես, պետական գրանցման համար 2007 թվականի առաջին կիսամյակում պետական բյուջե է վճարվել ավելի քան 1.7 մլրդ դրամ, որը 18.4%-ով

գերազանցում է նախատեսված և 21.9%-ով՝ նախորդ տարվա առաջին կիսամյակի փաստացի մուտքերը:

Հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների իրականացման համար գանձվող մուտքերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են շուրջ 913.5 մլրդ դրամ՝ 15.9%-ով գերազանցելով ծրագիրը: Նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ ևս արձանագրվել է բարձր ցուցանիշ՝ 13.5% աճ:

Հաշվետու ժամանակահատվածում գերակատարվել են նաև լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզավորումից, ինչպես նաև գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների, ֆիրմային անվանումների, ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պաշտպանության հետ կապված գործողությունների համար ստացված մուտքերը, որոնք համապատասխանաբար կազմել են 1.4 մլրդ և 154.7 մլն դրամ՝ ապահովելով 109.5 և 137.2 տոկոս կատարողական:

Օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների համար գանձվող մուտքերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են շուրջ 3.5 մլրդ դրամ՝ 20.1%-ով գերազանցելով ծրագիրը: Այն հիմնականում պայմանավորված է օդային տրանսպորտի միջոցով ֆիզիկական անձանց ելքի համար գանձվող մուտքերի աճով, որոնք կազմել են շուրջ 3.0 մլրդ դրամ՝ 17.3%-ով գերազանցելով նախատեսված և 23.8%-ով՝ նախորդ տարվա առաջին կիսամյակի փաստացի մուտքերը:

2007 թվականի հաշվետու ժամանակահատվածում առանձին տուրքերի գծով արձանագրվել են նաև ծրագրվածից ցածր ցուցանիշներ: Մասնավորապես, դատարան տրվող հայցադիմումների և գանգատների դիմաց պետական տուրքերը կազմել են շուրջ 287.3 մլն դրամ, որից 93.5 մլն դրամը կազմում են պետական կառավարման մարմինների կողմից վճարված և բյուջեից փոխհատուցված գումարները: Ծրագրից շեղումը կազմում է 2.1%, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված տուրքերը նվազել են 17.5%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում նվազել են նաև ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար գանձված գումարները, որոնք կազմել են 1.1 մլրդ դրամ և 8.7%-ով զիջել ծրագիրը: Նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ արձանագրվել է նշված մուտքերի 3.4% աճ:

2006 թվականի առաջին կիսամյակի համեմատ պետական տուրքն աճել է 11.6%-ով կամ 943.5 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է օդային տրանսպորտի միջոցով ֆիզիկական անձանց ելքի, պետական գրանցման, գործունեության որոշ

տեսակների լիցենզավորման, հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների, ինչպես նաև ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի համար գանձվող տուրքերի աճով:

### **Ոչ հարկային եկամուտներ**

2007 թվականի առաջին կիսամյակում ոչ հարկային եկամուտներից պետական բյուջե է մուտքագրվել շուրջ 23.6 մլրդ դրամ՝ կրկնակի գերազանցելով Կառավարության ծրագրով նախատեսված ցուցանիշը: Ծրագրի գերազանցումը հիմնականում պայմանավորված է «Չանգեզուրի պղնձամոլիբդենային գործարան» ՓԲԸ-ի մասնավորեցման գործընթացի արդյունքում գնորդների հետ բացառիկ բանակցությունների վարման իրավունքի դիմաց կատարված վճարով, որը կազմել է 6.8 մլրդ դրամ, ինչպես նաև «Արմենթել» ՓԲԸ-ի հետ կնքված հաշտության համաձայնության արդյունքում 4.6 մլրդ դրամ վճարումով: Առանց վերոհիշյալ գումարների ոչ հարկային եկամուտների կատարողականը կազմում է 104.8%: Վերջինս հիմնականում պայմանավորված է ԿԲ-ում ներդրված ավանդների և բյուջեների ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխման ու դեպոզիտների դիմաց ստացված շուրջ 1.7 մլրդ դրամ մուտքերով, որոնց գծով պետական բյուջեում եկամուտներ չեն նախատեսվել: Ծրագրի գերազանցում է արձանագրվել նաև բաժնետիրական կապիտալում կատարված ներդրումներից ստացվող դիվիդենդների, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումից մուտքերի, պետական գույքի վարձակալության, ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման դիմաց ստացված տոկոսավճարների և այլ ոչ հարկային եկամուտների գծով: Նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ ոչ հարկային եկամուտներն ավելացել են 35.7%-ով՝ պայմանավորված բյուջետային ազատ միջոցների դիմաց ստացված տոկոսավճարների և այլ ոչ հարկային եկամուտների աճով:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումից մուտքերը նախատեսված 186.2 մլն դրամի դիմաց կազմել են 359.4 մլն դրամ և 1.5 անգամ գերազանցել նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը:

219.4 մլն դրամ պետական բյուջե է մուտքագրվել պետական գույքի և հողերի վարձավճարներից՝ նախատեսված 172.6 մլն դրամի փոխարեն և ապահովել կիսամյակային ծրագրի 127.1% կատարողական, ինչը պայմանավորված է պետական ձեռնարկությունների ու գույքի վարձակալության և օգտագործման վարձավճարների 37% աճով:



Պետական բյուջեի ազատ դրամական միջոցների դիմաց հաշվետու ժամանակահատվածում մուտքագրվել են 1.7 մլրդ դրամի տոկոսավճարներ, որից ավելի քան 1.4 մլրդ դրամը ստացվել է ԿԲ-ում պետական բյուջեի ազատ դրամական միջոցների հաշվին ավանդների դիմաց տոկոսավճարներից, որը հաշվետու տարվա բյուջեում նախատեսված չի եղել: Բաժնետիրական կապիտալում կատարված ներդրումներից ստացվել են 287.3 մլն դրամի շահաբաժիններ, որոնք 3.3 անգամ գերազանցել են առաջին կիսամյակի ծրագրային ցուցանիշը՝ պայմանավորված նախորդ տարիներին կուտակված ապառքների վճարումներով:

Պետության տված վարկերի օգտագործման դիմաց վճարները նախատեսված 241.3 մլն դրամի փոխարեն կազմել են շուրջ 294 մլն դրամ և 29.6 մլն դրամով կամ 11.2%-ով գերազանցել նախորդ տարվա նույն ցուցանիշը: Մասնավորապես, ռեզիդենտների կողմից վճարումները կազմել են շուրջ 198.9 մլն դրամ՝ ապահովելով կիսամյակային ծրագրի 136.1% կատարողական և 30.6%-ով գերազանցելով 2006 թվականի համապատասխան ցուցանիշը: Նախատեսված ամբողջ ծավալով իրականացվել է Վրաստանի կողմից ՀՀ նկատմամբ պարտավորությունների սպասարկումը՝ կազմելով 95.1 մլն դրամ:

Տիրագուրկ, ժառանգության իրավունքով, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանցից (բացառությամբ ՀՀ համայնքների, միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների) նվիրատվության կարգով պետությանը որպես սեփականություն անցած դրամական միջոցներից, ինչպես նաև հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող գույքի օտարումից հաշվետու ժամանակահատվածում նախատեսված 37.7 մլն դրամի փոխարեն փաստացի բյուջե է մուտքագրվել 33.5 մլն դրամ և 610.7 մլն դրամով (94.8%-ով) զիջել նախորդ տարվա նույն ցուցանիշը: Վերջինս մասամբ պայմանավորված է նախորդ տարվա նույն ժամանակահատվածում ՎՋԵԲ «Զվարթնոց» բեռնային համալիրի վարկային ծրագրի սպասարկման նպատակով «Արմենիա» միջազգային օդանավակայաններ ՓԲԸ-ի կողմից ՀՀ կառավարությանը տրամադրված 511.0 մլն դրամ նվիրատվությամբ: Առանց նշված գումարի, վերոհիշյալ եկամուտների նվազումը կազմում է 74.8% կամ 99.7 մլն դրամ:

Իրավախախտումների համար գործադիր և դատական իշխանության մարմինների կողմից կիրառված պատժամիջոցներից հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջե է մուտքագրվել շուրջ 1.2 մլրդ դրամ, որը 22.4%-ով ավելի է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի մուտքերից:

Այլ ոչ հարկային եկամուտները հաշվետու ժամանակահատվածում կազմել են ավելի քան 19.5 մլրդ դրամ՝ 2.1 անգամ գերազանցելով ծրագիրը և 33.3%-ով՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի մուտքերը: Այս ցուցանիշը հիմնականում պայմանավորված է

«Չանգեզուրի պղնձամոլիբդենային գործարան» ՓԲԸ-ի մասնավորեցման արդյունքում և «Արմենթել» ՓԲԸ-ի հետ կնքված հաշտության համաձայնությամբ վճարված գումարներով:

### **Կապիտալի գործառնություններից եկամուտներ**

2007 թվականի առաջին կիսամյակում կապիտալի գործառնություններից պետական բյուջեի եկամուտները կազմել են շուրջ 10.1 մլրդ դրամ՝ 11.4%-ով զիջելով Կառավարության առաջին կիսամյակի ծրագրով ամրագրված ցուցանիշը: Շեղումը պայմանավորված է պետական սեփականություն հանդիսացող հողի վաճառքի արդյունքում ծրագրվածից քիչ ստացված մուտքերով: Այս աղբյուրից նախատեսվել էր պետական բյուջե մուտքագրել ավելի քան 11.0 մլրդ դրամ՝ հիմնականում Երևանի տարածքում գտնվող հողերի վաճառքից: Փաստացի մուտքերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են շուրջ 9.5 մլրդ դրամ կամ նախատեսվածից 13.8%-ով պակաս:

Կապիտալի գործառնություններից եկամուտներից շուրջ 341.7 մլն դրամը ստացվել է պետական գույքի օտարումից՝ նախատեսված 122.8 մլն դրամի դիմաց: 235.5 մլն դրամ է մուտքագրվել այլ ակտիվների վաճառքից՝ նախատեսված 222.6 մլն դրամի փոխարեն: 2006 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ կապիտալի գործառնություններից եկամուտներն աճել են 87.4%-ով՝ հիմնականում պայմանավորված հողի վաճառքից ստացված եկամուտների ավելի քան 2.2 անգամ աճով:

### **Պաշտոնական տրանսֆերտներ**

2007 թվականի առաջին կիսամյակում արտաքին աղբյուրներից ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել ավելի քան 8.2 մլրդ դրամի պաշտոնական տրանսֆերտներ, որը կազմում է ծրագրի 91.7%-ը: Թերակատարման հիմնական պատճառը Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջոցներով նախատեսված Լոռու և Շիրակի մարզերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգման դրամաշնորհային ծրագրերի չկատարման հանգամանքն է: Մյուս ծրագրերի գծով ևս արձանագրվել են շեղումներ, որը պայմանավորված է փաստացի աշխատանքների ծավալներով:

Հաշվետու ժամանակահատվածում ավելի քան 5.0 մլրդ դրամի դրամաշնորհ է հատկացվել Լինսի հիմնադրամի կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում, որոնք 2007 թվականի բյուջեում չեն նախատեսվել: Մասնավորապես, ավելի քան 1.9 մլրդ դրամի չափով գումար է ստացվել «Կրթական հաստատությունների վերականգնում», 1.1 մլրդ դրամ՝ «Երևանի փողոցների վերանորոգում» և շուրջ 2.0 մլրդ դրամ՝ «Ճանապարհների վերանորոգում» ծրագրերի շրջանակներում: Համաշխարհային բանկի (ՀԲ) աջակցությամբ

իրականացվող Աղքատության հաղթահարման աջակցության երրորդ վարկի նախապատրաստման ճապոնական դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախորդ տարի նախատեսված գումարն ընթացիկ տարում փոխանցելու արդյունքում նախատեսված շուրջ 25.0 մլն դրամի փոխարեն պետական բյուջեի մուտքը կազմել է 109.8 մլն դրամ:

280.1 մլն դրամ տրամադրվել է Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կողմից՝ Տավուշի և Գեղարքունիքի մարզերում մարզային զարգացման ծրագրերի ֆինանսավորման նպատակով: 211.7 մլն դրամ է ստացվել Հայաստանի Հանրապետության ու Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության միջև ստորագրված աղքատության հաղթահարման նպատակով բյուջեի աջակցության մասին փոխըմբռնման հուշագրի շրջանակներում, 243.8 մլն դրամ տրամադրվել է Ճապոնիայի կառավարության կողմից «Պարենային արտադրության աճ» ծրագրի շրջանակներում:

2007 թվականի առաջին կիսամյակում չեն ստացվել Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Լոռու և Շիրակի մարզերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգման ծրագրի և Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող թռչնագրիային հակազդելու ճապոնական դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված դրամաշնորհները:

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսված 1.8 մլրդ դրամի փոխարեն 1.6 մլրդ դրամ գումար է տրամադրվել ԱՄՆ կառավարության կողմից՝ «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում: Շուրջ 46.0 մլն դրամ ստացվել է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Գյուղական ձեռնարկությունների և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսության զարգացման ճապոնական դրամաշնորհային ծրագրի շրջանակներում՝ նախատեսված ավելի քան 100.0 մլն դրամի փոխարեն: Ծրագրվածից պակաս է ստացվել Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող հանրային հատվածի ներքին առողիտի իրականացման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում՝ նախատեսված ավելի քան 70.2 մլն դրամի փոխարեն տրամադրվել է շուրջ 17.7 մլն դրամ, ինչպես նաև Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող երթևեկության կառավարման և անվտանգության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում՝ նախատեսված շուրջ 121.4 մլն դրամի փոխարեն տրամադրվել է 69.0 մլն դրամ: Եվս 630.4 մլն դրամ տրամադրվել է միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների կողմից տրամադրված մի շարք այլ ծրագրերի շրջանակներում՝ կազմելով ծրագրվածի 100.4%-ը:

Հաշվետու ժամանակահատվածում 6.9 մլն դրամ մուտքագրվել է պետական հիմնարկների արտաբյուջետային հաշիվներին՝ նրանց կողմից իրականացվող ծրագրերի ֆինանսավորման նպատակով:

2006 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ պաշտոնական տրանսֆերտներից պետական բյուջեի մուտքերն աճել են 94.9%-ով կամ 4.0 մլրդ դրամով: Աճը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ 2006 թվականին նախատեսված Լինսի հիմնադրամի դրամաշնորհները հատկացվել են ընթացիկ տարում, ինչպես նաև 2007 թվականին «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի մեկնարկով:


**ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ**

2007 թվականի առաջին կիսամյակում ՀՀ պետական բյուջեի հաշվին իրականացվել են 245.7 մլրդ դրամի ծախսեր՝ կազմելով ծրագրված ծախսերի 85.3%-ը: Ընդունը մեծ մասամբ կապիտալ ծրագրերի և ծառայությունների ձեռք բերման ծախսերի ցածր կատարողականի արդյունք է: Հարկ է նշել, որ հաշվետու ժամանակահատվածում սահմանված կարգով գրանցված բոլոր պարտավորություններն ամբողջությամբ ֆինանսավորվել են: 2006 թվականի առաջին կիսամյակի համեմատ պետական բյուջեի ծախսերն աճել են 21.4%-ով կամ շուրջ 43.3 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է կապիտալ ծախսերի, ծառայությունների ձեռք բերման և տրանսֆերտների ծախսերի աճով:

**Տնտեսագիտական դասակարգում**

Ըստ տնտեսագիտական բովանդակության ՀՀ 2007 թվականի առաջին կիսամյակի ընթացքում պետական բյուջեի ծախսերն ունեցել են հետևյալ կառուցվածքը. դրանց 73.8%-ն ուղղվել է ընթացիկ, 21.8%-ը՝ կապիտալ ծախսերի ֆինանսավորմանը, 4.4%-ը՝ գույտ վարկավորմանը: Ծրագրի համեմատ ծախսերի կառուցվածքում ընթացիկ ծախսերն ունեցել են ծրագրվածից բարձր տեսակարար կշիռ, փոխարենը զգալի շեղում է արձանագրվել կապիտալ ծախսերի գծով: Սակայն նախորդ տարվա համեմատ կապիտալ ծախսերի առաջանցիկ աճի արդյունքում դրանց տեսակարար կշիռն աճել է՝ 17.3%-ից հասնելով 21.8%-ի: Համապատասխանաբար, նվազել է ընթացիկ ծախսերի տեսակարար կշիռը՝ նախորդ տարվա 78.4%-ի դիմաց կազմելով 73.8%:


**ՀՀ պետական բյուջեի ծախսերի կառուցվածքը**




**Ընթացիկ ծախսեր**

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեից ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը հատկացվել է 181.3 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 88.8%-ով կատարում: Ծեղումն առաջացել է հիմնականում ապրանքների և ծառայությունների ձեռք բերման ծախսերի գծով: Որոշակի տնտեսումներ կան նաև ընթացիկ ծախսերի մյուս հոդվածներով: Նախորդ տարվա համեմատ ընթացիկ ծախսերն ավելացել են 14.2%-ով կամ 22.5 մլրդ դրամով: Գրանցում ավելացել է ապրանքների և ծառայությունների ձեռք բերման, տրանսֆերտների տեսակարար կշիռը և հիմնականում նվազել պետական պարտքի սպասարկման և աշխատավարձերի ուղղությամբ հատկացումների տեսակարար կշիռը:

**2006թ. I կիսամյակ**



**2007թ. I կիսամյակ**



Հաշվետու ժամանակահատվածում ընթացիկ ծախսերի 10.4%-ը՝ 18.8 մլրդ դրամ, տրամադրվել է պետական հիմնարկների աշխատողների աշխատավարձերի վճարմանը, որից 615.1 մլն դրամը հատկացվել է քաղաքացիական ծառայողների պարգևատրման նպատակով, իսկ 177.9 մլն դրամը՝ որպես հատուկ նպատակային ֆոնդերից տրվող պարգևատրում: Աշխատավարձերի ֆինանսավորման նպատակով ծախսվել է տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված միջոցների 90.0%-ը: Նախորդ տարվա

համեմատ աշխատավարձի ծախսերն ավելացել են 11.9%-ով կամ ավելի քան 2.0 մլրդ դրամով:

Պետական պարտքի սպասարկմանը տրամադրվել է ծրագրվածի 80.7%-ը՝ 4.2 մլրդ դրամ, որից 2.5 մլրդ դրամն ուղղվել է ներքին, շուրջ 1.7 մլրդ դրամը՝ արտաքին պարտքի սպասարկմանը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ներքին պարտքի սպասարկման ծախսերի 883.6 մլն դրամի խնայողություններով, ինչն իր հերթին պայմանավորված է հետգումումների՝ ծրագրված ծավալից շեղումով: 118.7 մլն դրամի խնայողություններ կան նաև արտաքին պարտքի սպասարկման ծախսերում:

Հունվար-հունիս ամիսների ընթացքում պետական բյուջեից տրամադրվել են 8.5 մլրդ դրամի սուբսիդիաներ, որի գերակշիռ մասը՝ շուրջ 7.0 մլրդ դրամը հատկացվել է ձեռնարկություններին և կազմակերպություններին, իսկ 1.5 մլրդ դրամը՝ որպես սուբվենցիաներ համայնքային նշանակության ծրագրերի ֆինանսավորման նպատակով: Բյուջեով նախատեսված սուբսիդավորման ծախսերը կատարվել են 89%-ով: Նախորդ տարվա համեմատ պետական բյուջեից տրամադրված սուբսիդիաների գումարն աճել է 17.3%-ով կամ շուրջ 1.3 մլրդ դրամով, ինչը պայմանավորված է համայնքների բյուջեներին տրվող սուբվենցիաների 7.8 անգամ աճով:

Պետական բյուջեի ընթացիկ ծախսերի 26.0%-ը կամ ավելի քան 47.1 մլրդ դրամ կազմել են ընթացիկ տրանսֆերտները՝ 96.5%-ով ապահովելով կիսամյակային ծրագիրը: Շեղումը հիմնականում պայմանավորված է այլ ներքին ընթացիկ տրանսֆերտների, թոշակների և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների տնտեսումներով: Տրանսֆերտային հատկացումները հիմնականում բաշխվել են հետևյալ կերպ՝ 13.4 մլրդ դրամ ուղղվել է նպաստների, 8.7 մլրդ դրամ՝ թոշակների, 8.8 մլրդ դրամ՝ համայնքների դոտացիաների, 13.0 մլրդ դրամը՝ ընթացիկ ներքին այլ տրանսֆերտային վճարների ֆինանսավորմանը: Նպաստների ծախսերը կազմել են տրանսֆերտային վճարների 28.5%-ը և ապահովել նախատեսված ցուցանիշի 99.8%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 5.5%-ով: Տրանսֆերտային վճարների 18.5%-ը՝ ավելի քան 8.7 մլրդ դրամ հատկացվել է թոշակներին: Թոշակների ծախսերի կիսամյակային ծրագիրը կատարվել է 95.7%-ով: 2006 թվականի համեմատ բյուջեից վճարված թոշակներն ավելացել են 9.8%-ով: Պետական բյուջեից համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաները հատկացվել են նախատեսված ամբողջ ծավալով՝ կազմելով 8.8 մլրդ դրամ և 21.3%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների և կրթաթոշակների ֆինանսավորման նպատակով ծախսվել է համապատասխանաբար 1.7 մլրդ դրամ և 825.2 մլն դրամ, որոնց կատարողականները կազմել են համապատասխանաբար 88.2% և

90.2%: 2006 թվականի առաջին կիսամյակի համեմատ տրանսֆերտների գծով ծախսերն ավելացել են 15.2%-ով:

2007 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ապրանքների և ծառայությունների ձեռք բերման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 102.7 մլրդ դրամ կամ պետական բյուջեի ընթացիկ ծախսերի 56.6%-ը՝ ապահովելով ծրագրային ցուցանիշի 85.8%-ով կատարում: Ծրագրից շեղումը հիմնականում տնտեսումների արդյունք է, որոնք առկա են բոլոր հոդվածներով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ապրանքների և ծառայությունների ձեռք բերման ծախսերն աճել են 14.8%-ով:

### **Կապիտալ ծախսեր**

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորմանն ուղղվել են ավելի քան 53.7 մլրդ դրամի միջոցներ, որից 27.8 մլրդ դրամ կազմել են կապիտալ ներդրումների և 25.9 մլրդ դրամ՝ կապիտալ նորոգումների ծախսերը: Կապիտալ ծախսերի ծրագրի կատարողականը կազմել է 73.2%, որը մեծ մասամբ պայմանավորված է կապիտալ շինարարության և կապիտալ նորոգումների աշխատանքների ցածր կատարողականով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կապիտալ ծախսերն ավելացել են 54.2%-ով կամ շուրջ 18.9 մլրդ դրամով: Աճը հիմնականում պայմանավորված է կրթության, ճանապարհաշինության, Կառավարության պահուստային ֆոնդից, սոցիալական ապահովության և գյուղատնտեսության ոլորտներում կատարված կապիտալ ծախսերի աճով:

### **Վարկավորում՝ հանած մարում**

2007 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ պետական բյուջեի գուտ վարկավորման ծախսերը կազմել են ավելի քան 10.7 մլրդ դրամ: Ծրագրված ցուցանիշի 1.8% գերազանցումը պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային ծրագրերի շրջանակներում կատարված վարկավորման, ինչպես նաև վարկերի վերադարձի բարձր մակարդակով: Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեից տրամադրված վարկերի ընդհանուր ծավալը կազմել է շուրջ 11.1 մլրդ դրամ՝ նախատեսված 10.7 մլրդ դրամի դիմաց: Նշված գումարից 9.6 մլրդ դրամը հատկացվել է ԼՂՀ-ին որպես միջպետական վարկ: Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ջեռուցման ծրագրի շրջանակներում տրամադրվել են 387 մլն դրամի վարկեր նախատեսված 142.8 մլն դրամի դիմաց,



Վերականգնվող էներգետիկայի ծրագրի գծով տրամադրվել է 381.5 մլն դրամ նախատեսված 267.8 մլն դրամի դիմաց և Գյուղական ձեռնարկությունների և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսության զարգացման ծրագրով տրամադրվել է 354.5 մլն դրամ, նախատեսված 228.5 մլն դրամի դիմաց: 272.1 մլն դրամ տրամադրվել է Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրի շրջանակներում՝ նախատեսված 426.5 մլն դրամի փոխարեն:

Նախկինում տրամադրված վարկերից պետական բյուջե է վերադարձվել 25.7 մլն դրամ: Մասնավորապես, 23.7 մլն դրամ կազմել է Հայաստանի Հանրապետության նկատմամբ Վրաստանի ունեցած պարտավորության մարումը: «Լինսի» հիմնադրամի վարկային ծրագրի շրջանակներում տրամադրված միջոցների փաստացի վերադարձը կազմել է 2.0 մլն դրամ: Հաշվետու ժամանակահատվածում ներքին վարկերի մարումից մուտքերը կազմել են 276.1 մլն դրամ՝ նախատեսված 139.6 մլն դրամի փոխարեն:

Նախորդ տարվա համեմատ զուտ վարկավորման ծախսերն ավելացել են 22.2%-ով կամ շուրջ 2.0 մլրդ դրամով՝ ի հաշիվ 2007 թվականի պետական բյուջեով ԼՂՀ-ին տրամադրվող միջպետական վարկի ավելացման:

#### **Գործառական դասակարգում**

2007 թվականի առաջին կիսամյակում ընդհանուր բնույթի պետական ծառայությունների գծով ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 24.7 մլրդ դրամ՝ ապահովելով կիսամյակային և տարեկան ծրագրային ցուցանիշների կատարումը համապատասխանաբար 86.7 և 41.2 տոկոսով: Առաջին կիսամյակի ծրագրային և փաստացի ցուցանիշների միջև շեղումը հիմնականում առաջացել է պետական ֆինանսական կառավարման, օրենսդիր և պետական կառավարման մարմինների, ինչպես նաև արտաքին քաղաքական գործունեության ծրագրերում: Հաշվետու ժամանակահատվածում ընդհանուր բնույթի պետական ծառայությունների խմբի ծախսերի տնտեսումը հիմնականում պայմանավորված է «ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 18-րդ կետի համաձայն պետական բյուջեում ներառված՝ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության (ՀՊԾ) և մաքսային պետական կոմիտեի (ՄՊԿ) նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդերի ծախսերի ցածր կատարողականով, որը կազմել է համապատասխանաբար 47.9 և 55.2 տոկոս:

*Օրենսդիր մարմնի և պետական կառավարման* ծախսերը հաշվետու կիսամյակում կազմել են շուրջ 4.3 մլրդ դրամ՝ ապահովելով նախատեսված ծախսերի 79.1%-ը: Շեղումը հիմնականում առաջացել է ԱԺ և պետական մարմինների պահպանման և վարչական

օբյեկտների հիմնանորոգման ու շինարարության ծախսերի տնտեսմամբ: 2006 թվականի առաջին կիսամյակի համեմատ այս ուղղությամբ կատարված ծախսերն ավելացել են 1.5%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում 5.5 մլրդ դրամ է հատկացվել *պետական ֆինանսական կառավարման* ոլորտին՝ ապահովելով ծրագրի 76.3% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է, ինչպես նշվել է, «ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 18-րդ կետով սահմանված ՀՊԾ և ՄՊԿ նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդերից կատարված վճարումների ցածր կատարողականով, որոնք համապատասխանաբար կազմել են 390.3 մլն դրամ և 818.3 մլն դրամ՝ նախատեսված 814.8 մլն և 1.5 մլրդ դրամի դիմաց: Բացի այդ, տնտեսումներ են արձանագրվել նաև պետական կառավարման մարմինների, մաքսատների և մաքսային կետերի պահպանման, Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հանրային հատվածի ներքին աուդիտի իրականացման դրամաշնորհային ծրագրի և ՀՀ գանձապետական համակարգի վճարահաշվարկային սպասարկման ծախսերի գծով:

2007 թվականի առաջին կիսամյակի ընթացքում *արտաքին քաղաքական գործունեության* ոլորտի ծախսերը կազմել են շուրջ 3.2 մլրդ դրամ՝ ապահովելով նախատեսված ծախսերի 79.8%-ը: Շեղումը հիմնականում առաջացել է դեսպանությունների համար շենքերի գնման, ՀՀ դեսպանությունների և ներկայացուցչությունների պահպանման, արտասահմանյան պատվիրակությունների ընդունելության, միջազգային ֆինանսական կազմակերպություններին ՀՀ անդամակցության, ինչպես նաև պետական կառավարման մարմինների պահպանման ծախսերում: Արտաքին քաղաքական գործունեության ոլորտին հատկացված միջոցների զգալի մասը՝ 2.1 մլրդ դրամ, ծախսվել է միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության նպատակով՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 95.3%-ը: 2006 թվականի առաջին կիսամյակի համեմատ արտաքին քաղաքական գործունեության ծախսերը նվազել են 5.1%-ով կամ շուրջ 173.7 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է միջազգային ֆինանսական կազմակերպություններին ՀՀ անդամակցության նպատակով պարտավորությունների կատարման համար միջոցների ավելի պակաս հատկացմամբ:

Ընդհանուր բնույթի պետական ծառայությունների ծախսերում ամենամեծ տեսակարար կշիռն ունի *արտաքին տնտեսական աջակցությունը*, որը կազմել է 9.56 մլրդ դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Շուրջ 9.59 մլրդ ուղղվել է ԼՂՀ-ի վարկավորմանը, որն ամբողջովին տրամադրվել է և 21.7%-ով գերազանցել նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը՝ պայմանավորված բյուջեի ծրագրով

ավել միջոցների հատկացմամբ: 25.7 մլն դրամ վճարվել է Վրաստանի կողմից՝ ՀՀ նկատմամբ առկա վարկային պարտավորությունների դիմաց:

*Ընդհանուր բնույթի իրավական գործունեության* ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են 542.2 մլն դրամ՝ նախատեսված 593.8 մլն դրամի դիմաց՝ 91.3%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Շեղումը հիմնականում առկա է ԴԱՀԿ ծառայության պահպանման, քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեության կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորման, վարչական օբյեկտների շինարարության և փորձաքննությունների կատարման ծառայությունների ձեռք բերման գծով պետական պատվերի ուղղություններով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ընդհանուր բնույթի իրավական գործունեության ծախսերն ավելացել են 31.0%-ով կամ 128.3 մլն դրամով:

*Ընտրությունների և հանրաքվեների* կազմակերպմանը հատկացվել է շուրջ 488.8 մլն դրամ՝ ապահովելով նախատեսված կիսամյակային ծախսերի 92.2%-ը:

*Ընդհանուր բնույթի պետական այլ ծառայությունների* ծրագրերի գծով ծախսերը կազմել են շուրջ 1.2 մլրդ դրամ՝ արձանագրելով 97.1% կատարողական: Այս ենթախմբում առանձին ծրագրերի գծով արձանագրվել են խիստ տարբեր կատարողականներ: Մասնավորապես, ցածր կատարողական է արձանագրվել Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող պետական հատվածի բարեփոխումների ծրագրի, պետական մարմինների պահպանման ծախսերի և պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրման աշխատանքների գծով: Միևնույն ժամանակ, Համաշխարհային բանկի (ՀԲ) աջակցությամբ իրականացվող Աղքատության հաղթահարման աջակցության Երրորդ վարկի նախապատրաստման և Վիճակագրական կարողությունների զարգացման համար տեխնիկական աջակցության հոլանդական դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերը համապատասխանա-բար 290.5 և 50.4 տոկոսով գերազանցել են ծրագրային ցուցանիշները:

2006 թվականի առաջին կիսամյակի համեմատ ընդհանուր բնույթի պետական ծառայությունների ծախսերն աճել են 14.1%-ով կամ շուրջ 3.1 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված արտաքին տնտեսական աջակցության, պետական ֆինանսական կառավարման, ընտրություններ և հանրաքվեներ, ընդհանուր բնույթի պետական այլ ծառայությունների, ինչպես նաև ՀԲ աջակցությամբ իրականացվող պետական հատվածի բարեփոխումների ծրագրերի ֆինանսավորման աճով:

2007 թվականի առաջին կիսամյակում պաշտպանության բնագավառին պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 39.0 մլրդ դրամ՝ կազմելով պետական բյուջեի ընդհանուր ծախսերի 15.9%-ը: Այս բնագավառում կատարված ծախսերը կազմել են կիսամյակային և տարեկան ծրագրային ցուցանիշների համապատասխանաբար 87.4 և 38.8 տոկոսը: Մասնավորապես, *ռազմական կարիքների* ծախսերը կազմել են ավելի քան 37.1 մլրդ դրամ, որը 19.1%-ով գերազանցում է նախորդ տարվա մակարդակը, իսկ *պաշտպանության բնագավառի այլ ծախսերը*՝ ավելի քան 1.8 մլրդ դրամ, որը 0.6%-ով զիջում է նախորդ տարվա ցուցանիշը:

2006 թվականի առաջին կիսամյակի համեմատ պաշտպանության բնագավառի ծախսերն ընդհանուր առմամբ ավելացել են 18.0%-ով կամ ավելի քան 5.9 մլրդ դրամով, որը պայմանավորված է ռազմական կարիքների բավարարմանն ուղղված գումարների աճով:

2007 թվականի առաջին կիսամյակում հասարակական կարգի պահպանության, անվտանգության և դատական գործունեության բնագավառներին ՀՀ պետական բյուջեից հատկացվել է շուրջ 18.3 մլրդ դրամ՝ ապահովելով կիսամյակային և տարեկան ծրագրային ցուցանիշների կատարումը համապատասխանաբար 72.2 և 31.8 տոկոսով: Խմբի ծախսերի 68.4%-ն ուղղվել է հասարակական կարգի պահպանման, 20.7%-ը՝ ազգային անվտանգության, 11.0%-ը՝ դատական գործունեության ծախսերի ֆինանսավորմանը: Ծրագրված ցուցանիշից շեղումը հիմնականում պայմանավորված է տնտեսումներով:

*Հասարակական կարգի պահպանությանը* հաշվետու ժամանակահատվածում տրամադրվել է շուրջ 12.5 մլրդ դրամ՝ նախատեսված 17.9 մլրդ դրամի դիմաց: Ծախսերում ներառված են նաև «ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 15-րդ և 18-րդ կետերով սահմանված վճարումները, որոնք կազմել են 1.9 մլրդ դրամ: Ծրագրից շեղումն առաջացել է հասարակական կարգի պահպանության ապահովման, ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության արտաբյուջետային միջոցների, քրեակատարողական համակարգի պահպանման և փրկարար ծառայության համակարգի ստորաբաժանումների պահպանման ծախսերի տնտեսման արդյունքում: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ հասարակական կարգի պահպանության ծախսերն ավելացել են 7.9%-ով կամ շուրջ 918.6 մլն դրամով:

*Ազգային անվտանգության* ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են շուրջ 3.8 մլրդ դրամ՝ ապահովելով կիսամյակային ծրագրի 86.8% կատարողական: 2006 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ ազգային անվտանգության ծախսերն ավելացել են 8.0%-ով կամ 279.5 մլն դրամով:

*Դատական համակարգի* ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են 2.0 մլրդ դրամ, ապահովելով կիսամյակային ծրագրի 65.7%-ը: Վերջինս մեծ մասամբ պայմանավորված է դատական իշխանության մարմինների ու դատախազության պահպանման և Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Դատախրավական բարեփոխումների ծրագրի ցածր կատարողականով: Ծրագրից շեղումներ են արձանագրվել նաև վարչական օբյեկտների շինարարության, դատական դպրոցի պահպանման, դատավորների ու դատական ծառայողների վերապատրաստման և ՀՀ դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի պահպանման ծրագրերի գծով: 2006 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ դատական գործունեության ծախսերը նվազել են 5.4%-ով կամ 113.4 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է Դատախրավական բարեփոխումների ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի նվազմամբ:

2006 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ հասարակական կարգի պահպանության, անվտանգության և դատական գործունեության ծախսերի աճը կազմել է 6.3% կամ շուրջ 1.1 մլրդ դրամ:

2007 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ պետական բյուջեից 42.6 մլրդ դրամ ուղղվել է կրթության և գիտության ոլորտի ֆինանսավորմանը՝ կազմելով կիսամյակային ծրագրի 94.6%-ը: Շեղումն առաջացել է հիմնականում հանրակրթության ու բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագրերում: 2006 թվականի առաջին կիսամյակի համեմատ կրթության և գիտության ծախսերն ավելացել են 25.3%-ով կամ ավելի քան 8.6 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթության համակարգի ծախսերի աճով: 2006 թվականի առաջին կիսամյակի համեմատ աճ է արձանագրվել նաև մյուս ուղղություններով, բացառությամբ արտադպրոցական դաստիարակության ծախսերի:

Շուրջ 187.6 մլն դրամ հատկացվել է ոլորտում պետական կառավարում իրականացնող մարմինների պահպանմանը՝ ապահովելով կիսամյակային ծրագրի 90.5%-ով կատարում: 2006 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ այս ծախսերն ավելացել են 52.9%-ով կամ ավելի քան 64.9 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է աշխատավարձերի աճով:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեով կրթության և գիտության ոլորտի ծախսերի հիմնական մասը՝ 76.7%-ը կամ ավելի քան 32.7 մլրդ դրամն ուղղվել է *տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթության* համակարգին, որը կազմում է նախատեսված հատկացումների 94.6%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է կապիտալ ծրագրերի, այդ թվում՝ ՀԲ աջակցությամբ իրականացվող Հայաստանի սոցիալական ներդրումների երրորդ ծրագրի ցածր կատարողականով:

Մասնավորապես, կրթական օբյեկտների հիմնանորոգման ծրագրի շրջանակներում ՀՀ պետական բյուջեով նախատեսված ավելի քան 6.3 մլրդ դրամի դիմաց ծախսվել է շուրջ 5.3 մլրդ դրամ կամ 83.2%-ը, Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ վարկային ծրագրի շրջանակներում՝ 858.1 մլն դրամ կամ նախատեսվածի 80.1%-ը: Հանրակրթության բնագավառի ծախսերի կատարողականի վրա զգալի ազդեցություն է գործել նաև հանրակրթական ծրագրերի իրականացման օժանդակության շրջանակներում տարրական դասարանների աշակերտներին անվճար դասագրքերով և ուսումնական գրականությամբ ապահովման, ինչպես նաև կենտրոնացված կարգով ավարտական փաստաթղթերի, գովասանագրերի, դասամատյանների, մեդալների, ծրարների, ուսումնական ծրագրերի, մանկավարժական պարբերականների և ուսումնադիտողական պարագաների ձեռք բերման ծախսերի կատարողականը՝ կազմելով համապատասխանաբար 27.3 և 17.8 տոկոս, որոնց ֆինանսավորումն իրականացվել է փաստացի պահանջին համապատասխան:

Միաժամանակ հարկ է նշել, որ ծրագրվածից ավելի ծախսեր են իրականացվել ՀԲ աջակցությամբ իրականացվող Կրթության որակի և համապատասխանության ծրագրի շրջանակներում՝ նախատեսված շուրջ 772.2 մլն դրամի դիմաց կատարվել են ավելի քան 1.1 մլրդ դրամի ծախսեր կամ 46.7%-ով ավելի: 1.9 մլրդ դրամ է տրամադրվել Լինսի հիմնադրամի միջոցներով իրականացվող «Կրթական հաստատությունների վերականգնում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում, որն ընթացիկ տարվա պետական բյուջեում նախատեսված չի եղել:

2006 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ հանրակրթության հատկացումներն ավելացել են 29.6%-ով կամ շուրջ 7.5 մլրդ դրամով, որը պայմանավորված է հանրակրթական ուսուցման (այլ պետական մարմինների գծով), կրթական օբյեկտների հիմնանորոգման, Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Կրթության որակի և համապատասխանության ծրագրերով հատկացումների ավելացմամբ: Աճը պայմանավորված է նաև Լինսի հիմնադրամի միջոցներով իրականացվող «Կրթական հաստատությունների վերականգնում» դրամաշնորհային և Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ վարկային ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերով, որոնք նախորդ տարվա պետական բյուջեով չեն հատկացվել:

*Հատուկ ընդհանուր կրթության* ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են ավելի քան 2.3 մլրդ դրամ՝ արձանագրելով կիսամյակային ծրագրային ցուցանիշի 96.7% կատարողական: 2006 թվականի նույն ժամանակահատվածի

համեմատ հատուկ ընդհանուր կրթության ոլորտում պետական բյուջեի ծախսերն ավելացել են 12.1%-ով կամ շուրջ 252.0 մլն դրամով:

*Արտադպրոցական դաստիարակության* բնագավառին կատարված հատկացումները կազմել են շուրջ 993.6 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 97.7% կատարողական: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այս ծախսերը նվազել են 11.7%-ով կամ շուրջ 131.8 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է մարզական օբյեկտների շինարարության և արտադպրոցական դաստիարակության (այլ պետական մարմինների գծով) ծրագրերի գծով ընթացիկ տարվա պետական բյուջեից կատարված ծախսերի նվազմամբ: Մասնավորապես, մարզական օբյեկտների շինարարության ծախսերը նվազել են 55.7%-ով, իսկ արտադպրոցական դաստիարակության (այլ պետական մարմինների գծով) ծախսերը՝ 28.7%-ով:

Նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ նկատելի աճ է արձանագրվել *նախնական և միջին մասնագիտական կրթության* ծրագրերում: Վերջիններիս շրջանակներում կատարված ծախսերը համապատասխանաբար 37 և 17.5 տոկոսով գերազանցել են նախորդ տարվա ցուցանիշները՝ ապահովելով 98.1% և 98.3% կատարողական:

*Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության* ծախսերը հաշվետու կիսամյակում կազմել են շուրջ 2.4 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրային ցուցանիշի 89.6% կատարողական, որը մասամբ պայմանավորված է փաստացի պահանջով: Նախորդ տարվա համեմատ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծախսերն աճել են 11.4%-ով կամ շուրջ 244.2 մլն դրամով:

2007 թվականի առաջին կիսամյակի ընթացքում պետական բյուջեից ավելի քան 2.3 մլրդ դրամ կամ կրթության ու գիտության ոլորտի ծախսերի 5.4%-ը տրամադրվել է գիտության բնագավառին, որը կազմել է նախատեսվածի 93.7%-ը: Շեղումը պայմանավորված է որոշ ծրագրերի ցածր կատարողականով, մասնավորապես, «Գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտություններ» ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ կազմակերպություններին պետական աջակցության (շեղումը կազմել է 4.8% կամ 32.6 մլն դրամ), նույն ծրագրի շրջանակներում այլ պետական մարմիններին աջակցության (շեղումը կազմել է 11.7% կամ 21.2 մլն դրամ), «Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքների պահպանում ու զարգացում» ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ կազմակերպություններին պետական աջակցության (շեղումը կազմել է 11.3% կամ 30.6 մլն դրամ), «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պետական նպատակային-ծրագրային

ֆինանսավորում» ծրագրի շրջանակներում կատարվող հատուկ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների գծով պետական պատվերի (շեղումը կազմել է 16.4% կամ 29.0 մլն դրամ) և ՀՀ ԳԱԱ Աղվերանի սիմպոզիումների տան վերանորոգման (շեղումը կազմել է 41.5% կամ 12.5 մլն դրամ) ծրագրերի գծով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ գիտության ոլորտի փաստացի ծախսերն աճել են 18.8%-ով կամ շուրջ 365.9 մլն դրամով:

2007 թվականի առաջին կիսամյակում ՀՀ պետական բյուջեից առողջապահության ոլորտին ուղղվել է բյուջետային ծախսերի 7.4%-ը կամ շուրջ 18.2 մլրդ դրամ՝ ապահովելով կիսամյակային և տարեկան ծրագրային ցուցանիշների կատարումը համապատասխանաբար 93.1 և 38.7 տոկոսով: Շեղումը հիմնականում պայմանավորված է կենտրոնացված կարգով դեղորայքի, նորագույն բժշկական սարքավորումների և գործիքների ձեռք բերման, ՀՀ-ում Տուբերկուլյոզի դեմ պայքարի Ազգային ծրագրի ուժեղացման, որոշ վարկային և դրամաշնորհային ծրագրերի ցածր կատարողականով, ինչպես նաև առողջապահական օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների չկատարման հանգամանքով: 2006 թվականի առաջին կիսամյակի համեմատ առողջապահության ոլորտի ծախսերն աճել են 11.2%-ով կամ շուրջ 1.8 մլրդ դրամով: Հարկ է նշել, որ բոլոր ենթախմբերում արձանագրվել է ծախսերի աճ:

Հաշվետու ժամանակահատվածում շուրջ 431.8 մլն դրամ տրամադրվել է առողջապահության բնագավառի պետական կառավարմանը՝ ապահովելով կիսամյակային ծրագրային ցուցանիշի 47.8%-ով կատարում: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՀՀ առողջապահության նախարարության արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացվող ՀՀ-ում Տուբերկուլյոզի դեմ պայքարի Ազգային ծրագրի ուժեղացման և Իմունիզացիայի ծրագրերի ցածր կատարողականով, առանց որոնց ենթախմբի ծախսերի կատարողականը կկազմի 93%: 2006 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ առողջապահության բնագավառի պետական կառավարման ծախսերն ավելացել են 38%-ով:

Առողջապահական ոլորտի ծախսերի 38%-ն ուղղվել է հիվանդանոցային բուժօգնության ծրագրերի ֆինանսավորմանը: Այն կազմել է ավելի քան 6.9 մլրդ դրամ կամ նախատեսվածի 97.8%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է առողջապահական օբյեկտների հիմնանորոգման, ինչպես նաև տուբերկուլյոզի բժշկական օգնության և աղիքային ու այլ ինֆեկցիոն հիվանդությունների բժշկական օգնության գծով պետական պատվերի ցածր կատարողականով: Առողջապահական օբյեկտների հիմնանորոգման ծրագրով առաջին կիսամյակում նախատեսված 390.3 մլն դրամի փոխարեն ծախսվել է շուրջ 306.2 մլն դրամ կամ նախատեսվածի 78.4%-ը, իսկ տուբերկուլյոզի բժշկական օգնության և աղիքային ու այլ ինֆեկցիոն հիվանդությունների



բժշկական օգնության գծով պետական պատվերի ծախսերը կատարվել են համապատասխանաբար 94.9 և 97.0 տոկոսով: 2006 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ հիվանդանոցային բուժօգնության ծախսերն ավելացել են 7.8%-ով կամ 498.4 մլն դրամով: Պետք է նշել, որ այս ենթախմբի ծրագրերի մեծ մասի գծով արձանագրվել է հատկացումների աճ, որում մեծ տեսակարար կշիռ ունի «Մինչև 7 տարեկան երեխաներին բժշկական օգնության գծով պետական պատվեր» ծրագիրը, որի ֆինանսավորումը կազմել է 840.9 մլն դրամ (99.4%): Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 16.9%-ով:

Հիվանդանոցային բուժօգնությունից հետո առողջապահության ոլորտում հաջորդ խոշոր ենթախումբը բնակչության առողջության առաջնային ապահովումն է, որին ուղղվել է առողջապահության ծախսերի 34.8%-ը: Առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) բուժօգնության գծով հաշվետու ժամանակահատվածում տրամադրվել է ավելի քան 6.3 մլրդ դրամ՝ ապահովելով կիսամյակային ծրագրի 95.9% կատարում: Շեղումը հիմնականում պայմանավորված է գորակոչային և նախագորակոչային տարիքի անձանց բժշկական օգնության և փորձաքննության գծով պետական պատվերի ցածր կատարողականով, որի համար ծախսվել է շուրջ 719.5 մլն դրամ կամ նախատեսվածի 73.9% -ը: Նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ այս ենթախմբի ծախսերն ավելացել են 6.9%-ով կամ 407.6 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է բնակչության առողջության առաջնային պահպանման գծով պետական պատվերի ծախսերի աճով: Այն կազմել է շուրջ 3.9 մլրդ դրամ՝ նախորդ տարվա 3.7 մլրդ դրամի դիմաց, ապահովելով 5.8% աճ:

2007 թվականի առաջին կիսամյակում ՀՀ պետական բյուջեից ավելի քան 1.2 մլրդ դրամ տրամադրվել է հիգիենիկ-հակահամաճարակային ծառայությունների ֆինանսավորմանը՝ 15.6%-ով գերազանցելով ծրագիրը: Վերջինս պայմանավորված է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Թռչնագրիպին հակազդելու վարկային ծրագրի 229.3% կատարողականով: Միևնույն ժամանակ, ցածր կատարողական է արձանագրվել Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Թռչնագրիպին հակազդելու ճապոնական դրամաշնորհային ծրագրի գծով՝ ապահովելով նախատեսվածի 25.5%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այս ենթախմբի ծախսերն ավելացել են 39.1%-ով՝ պայմանավորված Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Թռչնագրիպին հակազդելու վարկային ծրագրի և հիգիենիկ-հակահամաճարակային ծառայության գծով պետական պատվերի ծախսերի աճով:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվել են նաև բուժօգնության մի շարք այլ ծառայություններ, որոնց գծով ծախսվել է ավելի քան

2.7 մյրդ դրամ՝ ապահովելով կիսամյակային ծրագրի 82.8%-ով կատարում: Շեղման հիմնական պատճառ է հանդիսացել կենտրոնացված կարգով նորագույն բժշկական սարքավորումների, գործիքների և դեղորայքի ձեռք բերման ծրագրերի, ինչպես նաև Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կողմից Հայաստանի Հանրապետությանը ֆինանսական օգնության կարգով տրամադրված նվիրաբերության միջոցների հաշվին ՀՀ Գեղարքունիքի և Տավուշի մարզերում իրականացվող մարզային զարգացման ծրագրի և Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ ծրագրերի ցածր կատարողականը, որոնք կատարվել են համապատասխանաբար 59.9, 82.1, 20.8 և 18.5 տոկոսով: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ առանձին ծրագրերի գծով արձանագրվել է նախատեսված ծավալների գերազանցում: Մասնավորապես, Առողջապահական համակարգի արդիականացման վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է 835.2 մլն դրամ՝ նախատեսված 557.6 մլն դրամի փոխարեն, իսկ Առողջապահական համակարգի արդիականացման ճապոնական դրամաշնորհային ծրագրով 34.9 մլն դրամ՝ նախատեսված 24.6 մլն դրամի փոխարեն՝ ապահովելով համապատասխանաբար 149.8 և 142.1 տոկոս կատարողական: Նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ բուժօգնության այլ ծառայությունների ծախսերն աճել են 18.0%-ով կամ 418.3 մլն դրամով, ինչը պայմանավորված է կենտրոնացված կարգով նորագույն բժշկական սարքավորումների, գործիքների և դեղորայքի ձեռք բերման ծախսերի աճով, որոնք համապատասխանաբար կազմել են 884.9 և 968.5 մլն դրամ և ապահովել 209.0 և 15.7 տոկոս աճ:

Հաշվետու ժամանակահատվածում առողջապահական այլ ծառայություններին և ծրագրերին տրամադրվել է ավելի քան 528.1 մլն դրամ՝ ապահովելով կիսամյակային ծրագրի 93.9% կատարում: Շեղումը հիմնականում պայմանավորված է «Հանրապետությունից դուրս բուժման ուղեգրված հիվանդների ճանապարհածախսի փոխհատուցում», «Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների անցկացման գծով պետական պատվեր» և «Ծխախոտի դեմ պայքարի պետական ծրագրի գծով պետական պատվեր» ծրագրերի ցածր կատարողականով, որոնք կազմել են համապատասխանաբար 65.9, 94.7 և 94.4 տոկոս: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այս ենթախմբի ծախսերն ավելացել են 10.2%-ով: Պետք է նշել, որ ենթախմբի ծրագրերի մեծ մասի գծով արձանագրվել է հատկացումների աճ, որում մեծ տեսակարար կշիռ ունի «Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների անցկացման գծով պետական պատվեր» ծրագիրը, որի շրջանակներում իրականացվել են 7060 հետազոտություններ՝ նախորդ տարվա 6756-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 45.9%-ով:

Հաշվետու կիսամյակում սոցիալական ապահովագրության և սոցիալական ապահովության ոլորտի ծրագրերի ֆինանսավորման նպատակով պետական բյուջեից հատկացվել է 30.3 մլրդ դրամ կամ պետական բյուջեի ընդհանուր ծախսերի 12.3%-ը՝ ապահովելով Կառավարության ծրագրով ամրագրված ցուցանիշի 93.9%-ով կատարում: Շեղումը հիմնականում առկա է կենսաթոշակային ապահովության, սոցիալական ապահովության միջոցառումների և այլ սոցիալական ծրագրերի ծախսերում: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ սոցիալական ապահովության և սոցիալական ապահովագրության բնագավառի ծախսերն ավելացել են 24.5%-ով կամ շուրջ 6.0 մլրդ դրամով, ինչը հիմնականում կապված է բնակարանային-կոմունալ տնտեսության բնագավառից որոշ ծրագրերի տեղափոխման, ինչպես նաև նպաստների և կենսաթոշակների ծախսերի ավելացման հետ:

Հաշվետու կիսամյակում շուրջ 533.2 մլն դրամ է տրամադրվել սոցիալական ապահովագրության և սոցիալական ապահովության բնագավառում պետական կառավարում իրականացնող մարմնի՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պահպանմանը, որը կազմել է ծրագրի 87.5%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված ծախսերն աճել են 23.5%-ով կամ 101.6 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված աշխատողների աշխատավարձերի բարձրացմամբ:

Սոցիալական ծախսերի գերակշռող մասը բաժին է ընկել բնակչությանը տրվող պետական նպաստներին ու կենսաթոշակային ապահովմանը: Հաշվետու ժամանակահատվածում կենսաթոշակային հատկացումները կատարվել են 95.7%-ով, որոնք կազմել են շուրջ 8.8 մլրդ դրամ: Շեղումը պայմանավորված է սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովության ծախսերում առկա խնայողություններով: Նշված ծախսերի կատարողականը կազմել է 93.9% կամ 341.7 մլն դրամ: Որոշակի խնայողություններ կան նաև շարքային զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների կենսաթոշակային ապահովման ծախսերում, որոնք կատարվել են 96%-ով և կազմել 47.5 մլն դրամ: Մնացած չորս ծրագրերի գծով հատկացումները կատարվել են 100%-ով: 2006 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ կենսաթոշակային ծախսերի աճը կազմել է 9.9% կամ 787.1 մլն դրամ:

ՀՀ պետական բյուջեով բնակչությանը նախատեսված պետական նպաստների ծախսերը 2007 թվականի առաջին կիսամյակում կազմել են շուրջ 13.4 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 99.7%-ով կատարում: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նպաստների ծախսերն ավելացել են 7.8%-ով կամ

964.0 մլն դրամով՝ պայմանավորված աղքատության ընտանեկան նպաստի և երեխայի ծննդյան միանվագ նպաստի վճարմանն ուղղված միջոցների ավելացմամբ:

Սոցիալական ապահովության միջոցառումների համար նախատեսված հատկացումներն ուղղվել են թվով 30 սոցիալական ծրագրերի ֆինանսավորմանը, որոնցում մեծ տեսակարար կշիռ ունեն տարեցների և երեխաների տուն-ինտերնատների և պետական աջակցության, ինչպես նաև հաշմանդամներին անվճար պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով ապահովման ու դրանց վերանորոգման ծախսերը: Հաշվետու ժամանակահատվածում սոցիալական ապահովության միջոցառումների ծախսերը կազմել են ավելի քան 1.9 մլրդ դրամ կամ առաջին կիսամյակի համար նախատեսվածի 74.6%-ը: Շեղումը հիմնականում առաջացել է վարձատրվող հասարակական աշխատանքների, տարեցների և երեխաների տուն-ինտերնատներին պետական աջակցության, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բնակարանի տրամադրման ծրագրերի գծով: Ջբաղվածության ծառայությունների ծրագրի շրջանակներում իրականացվող վարձատրվող հասարակական աշխատանքներին տրամադրվել է 127.4 մլն դրամ՝ նախատեսված 348.8 մլն դրամի դիմաց, ինչը պայմանավորված է աշխատանքների ցածր կատարողականով: Հաշմանդամներին անվճար պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով ապահովման և դրանց վերանորոգման ծախսերը կատարվել են 83.7%-ով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ հունիս ամսվա կատարողականը ներկայացվել է հուլիս ամսին: Երեխաների շուրջօրյա խնամքի ծախսերը կատարվել են 86.0%-ով՝ պայմանավորված մանկատանը գրանցված երեխաների ժամանակավոր բացակայությամբ: 2006 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ սոցիալական ապահովության միջոցառումների ծախսերն աճել են 17.8%-ով կամ 289.2 մլն դրամով:

Այլ սոցիալական ծրագրերի ծախսերը հաշվետու կիսամյակում կազմել են շուրջ 5.7 մլրդ դրամ կամ նախատեսվածի 87.5%-ը: Ցածր ցուցանիշը հիմնականում պայմանավորված է գոհված (մահացած) և առաջին, երկրորդ և երրորդ կարգի հաշմանդամ զինծառայողների անօթևան ընտանիքներին բնակարանով ապահովման և բնակարանային պայմանների բարելավման ծախսերի ֆինանսավորման համար ներկայացված կատարողականների ծավալով: Նշված նպատակով նախատեսված 2.3 մլրդ դրամի փոխարեն տրամադրվել է 1.5 մլրդ դրամ կամ 64.7%-ը: Բացի այդ, ցածր՝ համապատասխանաբար 49% և 82.4% կատարողական է արձանագրվել նաև գյուղական բնակավայրերում անօթևան մնացած ընտանիքների համար բնակարանային շինարարության և բնակարանների գնման վկայագրերի տրամադրման միջոցով բնակարանային ապահովման ծրագրերի գծով, որոնց շրջանակներում կատարվել են 173.3 մլն դրամի և 1.1 մլրդ դրամի ծախսեր: 61.3%-ով է կատարվել Մեծ

Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կողմից Հայաստանի Հանրապետությանը ֆինանսական օգնության կարգով տրամադրված նվիրաբերության միջոցների հաշվին իրականացվող ՀՀ Գեղարքունիքի և Տավուշի մարզերում մարզային զարգացման ծրագրի գծով, որի ծախսերը կազմել են շուրջ 8 մլն դրամ: Հայրենական Մեծ պատերազմի վետերաններին, 25.11.1998թ. ՀՕ-258 օրենքի 13-րդ հոդվածում նշված պատճառներով հաշմանդամ դարձած զինծառայողներին, ինչպես նաև ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներին դրամական օգնության տրամադրման ծրագիրը հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 95.7%-ով, որի ծախսերը կազմել են ավելի քան 1.1 մլրդ դրամ: Միաժամանակ, ծրագրված ծավալը 3.6 անգամ գերազանցել են Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող սոցիալական պաշտպանության ոլորտի կառավարման վարկային ծրագրի շրջանակներում իրականացված ծախսերը, որոնք նախատեսված 182.3 մլն դրամի դիմաց կազմել են 671.9 մլն դրամ:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այլ սոցիալական ծրագրերի գծով ծախսերն ունեցել են ավելի քան եռակի աճ: Նշված ցուցանիշի վրա մեծ ազդեցություն է գործել այն հանգամանքը, որ 2007 թվականի պետական բյուջեում որոշ ծրագրեր, որոնք 2006 թվականի բյուջեում նախատեսվել էին բնակարանային-կոմունալ տնտեսության ոլորտի ծախսերում, տեղափոխվել են սոցիալական ոլորտ, մասնավորապես՝ զոհված (մահացած) և առաջին, երկրորդ և երրորդ կարգի հաշմանդամ զինծառայողների անօթևան ընտանիքներին բնակարանով ապահովման և բնակարանային պայմանների բարելավման, գյուղական բնակավայրերում անօթևան մնացած ընտանիքների համար բնակարանային շինարարության, բնակարանների գնման վկայագրերի տրամադրման միջոցով բնակարանային ապահովման ծրագրերը: Առանց նշված ծրագրերի այլ սոցիալական ծախսերի աճը նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ կազմել է 57.6%, որը պայմանավորված է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող սոցիալական պաշտպանության ոլորտի կառավարման ծրագրի և ՀՄ պատերազմի վետերաններին, 25.11.98թ. ՀՕ-258 օրենքի 13-րդ հոդվածում նշված պատճառներով հաշմանդամ դարձած զինծառայողներին, ինչպես նաև ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներին դրամական օգնության ծախսերի աճով, ինչպես նաև «ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների, որպես նախկին ԽՍՀՄ Խնայքանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրած դրամական ավանդների դիմաց 494.7 մլն դրամ փոխհատուցման տրամադրմամբ:

Ընթացիկ տարվա առաջին կիսամյակում ՀՀ պետական բյուջեից 6.5 մլրդ դրամ կամ պետական բյուջեի ընդհանուր ծախսերի 2.6%-ն ուղղվել է մշակույթի, տեղեկատվության, սպորտի և կրոնի բնագավառների ֆինանսավորմանը՝ ապահովելով կիսամյակային և տարեկան ծրագրերի համապատասխանաբար 88.8 և 41.7 տոկոսով կատարում: Շեղումն առաջացել է հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնման, սպորտի, մշակութային օբյեկտների հիմնանորոգման ու շինարարության ծրագրերում: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ մշակույթի, տեղեկատվության, սպորտի և կրոնի բնագավառների ծախսերն ավելացել են 7.1%-ով կամ 432.0 մլն դրամով: Աճը հիմնականում պայմանավորված է մշակութային օբյեկտների հիմնանորոգման և շինարարության, հեռուստառադիոհաղորդումների, արվեստի, կինեմատոգրաֆիայի և սպորտի բնագավառների ֆինանսավորման աճով:

Բնագավառի պետական կառավարման ծախսերն առաջին կիսամյակում կազմել են շուրջ 241.9 մլն դրամ՝ արձանագրելով կիսամյակային ծրագրի 89.8% կատարողական: 2006 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ նշված ծախսերն ավելացել են 9.5%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է աշխատողների աշխատավարձի բարձրացմամբ:

Գրադարաններին պետական աջակցության ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են 359.1 մլն դրամ՝ ապահովելով կիսամյակի համար նախատեսված ծրագրային ցուցանիշի 91.3% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ տրամադրված գումարը, որը կազմել է 96.7%, հաշվետու ժամանակահատվածում ամբողջությամբ չի ծախսվել, ինչպես նաև նախատեսված հիմնանորոգման աշխատանքների ցածր կատարողականով: 2006 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ գրադարանների պահպանման ծախսերն ավելացել են 11.5%-ով կամ շուրջ 37.1 մլն դրամով:

Թանգարաններին աջակցության նպատակով հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեից կատարվել են ավելի քան 488.0 մլն դրամի ծախսեր կամ նախատեսվածի 88.3%-ը: Հարկ է նշել, որ թանգարանների ֆինանսավորումը կատարվել է 97.9%-ով, որը, սակայն, հաշվետու ժամանակահատվածում ամբողջությամբ չի իրացվել: Թանգարանների և ցուցահանդեսների ծախսերը 35.5%-ով զիջում են 2006 թվականի առաջին կիսամյակի ցուցանիշը, ինչը հիմնականում պայմանավորված է հիմնանորոգման ծախսերի նվազմամբ և այն հանգամանքով, որ, ի տարբերություն նախորդ տարվա, ընթացիկ տարվա առաջին կիսամյակում թանգարանների համար կենտրոնացված կարգով սարքերի և սարքավորումների ձեռք բերման համար միջոցներ չեն նախատեսվել:

Մշակույթի տների, ակումբների ու կենտրոնների ծախսերը 2007 թվականի առաջին կիսամյակում կազմել են 486.1 մլն դրամ՝ ապահովելով 83.2% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է մշակութային օբյեկտների հիմնանորոգման ու շինարարության աշխատանքների ցածր կատարողականով: 2006 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ մշակույթի տների, ակումբների ու կենտրոնների ծախսերն աճել են 478.2 մլն դրամով, ինչը պայմանավորված է մշակութային օբյեկտների հիմնանորոգման և շինարարության ծախսերով:

Այլ մշակութային հիմնարկներին պետական աջակցությունը կազմել է 219.2 մլն դրամ, որն ապահովել է կիսամյակային ծրագրի 96.7% կատարողական: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այս ենթախմբի ծախսերը նվազել են 41.3%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է 2006 թվականին «Այաս» ծովային հետազոտությունների ակումբին պետական աջակցության հատկացմամբ:

Արվեստի բնագավառում կատարված ծախսերը կազմել են ավելի քան 1.4 մլրդ դրամ կամ մշակույթի, տեղեկատվության սպորտի և կրոնի բնագավառի ծախսերի 22.0%-ը՝ ապահովելով կիսամյակի համար նախատեսված ծրագրային ցուցանիշի 97.0% կատարում: Ծրագրից փոքր-ինչ շեղումն առաջացել է Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերի 89.9% կատարողականով: 2006 թվականի առաջին կիսամյակի համեմատ արվեստի բնագավառի ֆինանսավորումն ավելացել է 5.1%-ով:

Անցած կիսամյակում շուրջ 224.8 մլն դրամ են կազմել կինեմատոգրաֆիայի բնագավառի ծախսերը՝ ապահովելով կիսամյակի համար նախատեսված ծրագրային ցուցանիշի 88.3% կատարողական՝ պայմանավորված ՀՀ արխիվային հավաքածուի մաս կազմող կինոհավաքածուի վերականգնման և թվայնացման աշխատանքների իրականացման գծով պետական պատվերի շրջանակներում նախատեսված աշխատանքների չիրականացմամբ: Նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ կինեմատոգրաֆիային պետական աջակցության ծախսերն աճել են 27.6%-ով:

Հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնման և պահպանման ոլորտին հատկացվել է շուրջ 28.7 մլն դրամ կամ կիսամյակային ծրագրի 8.1%-ը: Ցածր կատարողականը հիմնականում պայմանավորված է նախատեսված աշխատանքների թերակատարմամբ, մասամբ էլ այն հանգամանքով, որ հատկացված գումարներն առաջին կիսամյակում ամբողջությամբ չեն ծախսվել: Արդյունքում 2006 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ նշված ծախսերը նվազել են 74.8%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում սպորտի բնագավառում պետական բյուջեից կատարվել են շուրջ 808.5 մլն դրամի ծախսեր, որոնք կազմել են կիսամյակային ծրագրի 87.7%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ

Համահայկական չորրորդ խաղերի անցկացման նպատակով «Սպորտային միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ-ին պետական աջակցության գումարը տրամադրվել է հուլիսին: Նախորդ տարվա համեմատ սպորտի բնագավառի ծախսերն ավելացել են 6.2%-ով:

Հեռուստառադիոհաղորդումների ծախսերն առաջին կիսամյակում կազմել են 1.7 մլրդ դրամ կամ խմբի ծախսերի 26.4%-ը՝ ապահովելով կիսամյակային ծրագրի 99.8% կատարողական: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված ծախսերն ավելացել են 16.4%-ով կամ 241.2 մլն դրամ, ինչը պայմանավորված է հեռուստառադիոհաղորդումների պատրաստման և հեռարձակման նպատակով «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ին պետական աջակցության ծավալների աճով:

Հաշվետու ժամանակահատվածում 237.2 մլն դրամ են կազմել հրատարակչությունների և խմբագրությունների պահպանման ծախսերը, որոնք ապահովել են 80.2% կատարողական և 2.9%-ով զիջել 2006 թվականի առաջին կիսամյակի ցուցանիշը:

2007 թվականի առաջին կիսամյակում 25.1 մլն դրամ հատկացվել է տեղեկատվության ձեռք բերմանը, և շուրջ 147.1 մլն դրամ՝ երիտասարդական ծրագրերին: Երկու ենթախմբերի ծրագրերն էլ նախատեսված ողջ ծավալով ֆինանսավորվել են և պահպանվել նախորդ տարվա մակարդակին:

Քաղաքական կուսակցություններին և հասարակական կազմակերպություններին աջակցության նպատակով պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 79.9 մլն դրամ, որն ապահովել է 89.5% կատարողական: Վերջինս պայմանավորված է ՀՀ ԱԺ ընտրություններում 3 և ավելի տոկոս ձայն հավաքած կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին աջակցության 67.9% ցուցանիշով, որը կազմել է 19.9 մլն դրամ (նախատեսված գումարի մնացած մասը հատկացվել է հուլիս ամսին): Մյուս երկու ծրագրերը՝ ազգային փոքրամասնություններին և հասարակական կազմակերպություններին պետական աջակցությունն իրականացվել է նախատեսված ծավալով՝ կազմելով համապատասխանաբար 10 մլն և 50 մլն դրամ:

2007 թվականի առաջին կիսամյակի ընթացքում բնակարանային կոմունալ տնտեսության ոլորտի ծրագրերին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 9.2 մլրդ դրամ՝ կազմելով կիսամյակային և տարեկան ծրագրված ցուցանիշների համապատասխանաբար 71.5 և 35.2 տոկոսը:

Հատկացված միջոցների 45.4%-ը՝ շուրջ 4.2 մլրդ դրամ, ուղղվել է բնակարանային տնտեսության և բնակարանային շինարարության ծրագրերի ֆինանսավորմանը՝ ապահովելով նախատեսված ծախսերի 73.6%-ը: Ցածր կատարողականը հիմնականում



պայմանավորված է Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերով, որոնք նախատեսված 4.6 մլրդ դրամի փոխարեն կազմել են 3.4 մլրդ դրամ: Ցածր կատարողական է արձանագրվել նաև ՀՀ համայնքային բյուջեներին սուբվենցիաների տրամադրման և անավարտ շինարարության բնակշինարարական կոոպերատիվների փայտտերերի ներդրած միջոցների դիմաց պետական օգնության ծրագրերի գծով, որոնք կատարվել են համապատասխանաբար 16.7%-ով և 60.9%-ով: Բացի այդ, չի իրականացվել սողանքային գոտիներում գտնվող բնակելի տների բնակիչների բնակարանային խնդիրների լուծման ծրագիրը, որի համար առաջին կիսամյակի բյուջեից հատկացվել էր 75 մլն դրամ: 2006 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ բնակարանային տնտեսության և բնակարանային շինարարության ծախսերը նվազել են 12.5%-ով կամ շուրջ 594.5 մլն դրամով: Ծախսերի կրճատումը հիմնականում պայմանավորված է հետևյալով: Ինչպես արդեն նշվել է, գոհված (մահացած) և առաջին, երկրորդ և երրորդ կարգի հաշմանդամ զինծառայողների անօթևան ընտանիքներին բնակարանով ապահովման և բնակարանային պայմանների բարելավման, գյուղական բնակավայրերում անօթևան մնացած ընտանիքների համար բնակարանային շինարարության և բնակարանների գնման վկայագրերի տրամադրման միջոցով բնակարանային ապահովման ծրագրերը, որոնք 2006 թվականի բյուջեում նախատեսվել էին բնակարանային-կոմունալ տնտեսության ոլորտի ծախսերում, 2007 թվականի պետական բյուջեում տեղափոխվել են սոցիալական ոլորտ: Բացի այդ, 2006 թվականին իրականացված չորս ծրագրերի գծով 2007 թվականին ծախսեր չեն կատարվել, իսկ անավարտ շինարարության բնակշինարարական կոոպերատիվների փայտտերերի ներդրած միջոցների դիմաց պետական օգնության ծախսերը 33.4%-ով զիջել են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Միևնույն ժամանակ Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերի և ՀԲ աջակցությամբ իրականացվող Քաղաքային ջեռուցման ծրագրի ծախսերի գծով արձանագրվել է էական աճ՝ համապատասխանաբար 2.8 անգամ կամ ավելի քան 2.2 մլրդ դրամ և 3.6 անգամ կամ 394.8 մլն դրամով:

Հաշվետու ժամանակահատվածում «Ռադիոակտիվ թափոնների վնասազերծում» ՓԲԸ-ին տրամադրվել է 9.4 մլրդ դրամ պետական աջակցություն, որի կատարողականը կազմել է 100%: Այն 32.2%-ով կամ շուրջ 4.5 մլն դրամով զիջել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը:

2007 թվականի առաջին կիսամյակում բնակարանային-կոմունալ տնտեսության բնագավառում կատարված ծախսերից ավելի քան 2.8 մլրդ դրամն ուղղվել է ջրամատակարարման և կոյուղու համակարգերի շահագործման աշխատանքների ֆինանսավորմանը՝ կազմելով ծրագրի 71.3%-ը: Ցածր կատարողականը մեծ մասամբ

պայմանավորված է ՀԲ աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման վարկային ծրագրի թերակատարմամբ, որի շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում օգտագործվել է 99.9 մլն դրամ՝ նախատեսված 899 մլն դրամի դիմաց: Ենթախմբի ծախսերի կատարողականի վրա բացասաբար է անդրադարձել նաև Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ Լոռու և Շիրակի մարզերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման ծրագրերի շրջանակներում դրամաշնորհային միջոցների տրամադրման հետաձգումը, որոնց շրջանակներում նախատեսվել էին համապատասխանաբար 247.5 մլն և 315.1 մլն դրամի ծախսեր: Չի կատարվել նաև «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի հիմնանորոգման ծրագիրը 33 մլն դրամի չափով: Ծրագրվածից պակաս չափով են կատարվել Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ Շիրակի մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման վարկային ծրագիրը՝ 86.5%-ով, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կողմից Հայաստանի Հանրապետությանը ֆինանսական օգնության կարգով տրամադրված նվիրաբերության միջոցների հաշվին իրականացվող ՀՀ Գեղարքունիքի և Տավուշի մարզերում մարզային զարգացման ծրագիրը՝ 8.5%-ով: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ ծրագրվածի նկատմամբ գերազանցել են Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ Արմավիրի մարզում կոյուղու համակարգերի պարզարանային կայանի կառուցման վարկային ծրագրի (138.9%), ՀԲ աջակցությամբ իրականացվող Համայնքային ջրամատակարարման և ջրահեռացման վարկային ծրագրի (118.6%), ինչպես նաև Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ Լոռու մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման վարկային ծրագրի (108.7%) շրջանակներում կատարված ծախսերը: Նախատեսված ծավալով տրամադրվել են «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սուբսիդավորման, Գերմանիայի Գաշնային Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող «Լոռի-ջրմուղկոյուղի» և «Շիրակի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-երի կադրերի պատրաստման և որակավորման բարձրացման դրամաշնորհային ծրագրերի գծով նախատեսված միջոցները:

Նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ ջրամատակարարման և կոյուղու համակարգերի շահագործման ծախսերը նվազել են 14.1%-ով կամ 465.2 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է 2007 թվականին Երևանի «Ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սուբսիդավորման դադարեցմամբ և «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սուբսիդավորման 15.8%-ով կրճատմամբ, Գերմանիայի զարգացման վարկերի բանկի

աջակցությամբ իրականացվող ՀՀ Արմավիրի մարզում կոյուղու համակարգերի պարզարանային կայանի կառուցման ծրագրի ծախսերի կրճատմամբ և մի շարք այլ ծրագրերի ավարտով:

Բնակարանային կոմունալ տնտեսության այլ ծրագրերի շրջանակներում 2007 թվականի առաջին կիսամյակում կատարված ծախսերը կազմել են շուրջ 2.2 մլրդ դրամ կամ նախատեսվածի 68.1%-ը, որոնք ուղղվել են անշարժ գույքի կադաստրի ոլորտում թվով 13 ծրագրերի ֆինանսավորմանը: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է այս բնագավառում նախատեսված Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերի և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանումների կողմից մատուցվող ծառայություններից ստացվող եկամուտների հաշվին կոմիտեի համակարգի գծով իրականացվող ծախսերի համապատասխանաբար 66.3% և 77.3% կատարողականով: Նշված ծրագրերով է պայմանավորված նաև նախորդ տարվա համեմատ այս ենթախմբի ծախսերի 26.5%-ով կամ 451.5 մլն դրամով աճը:

Վառելիքային և էներգետիկ բնագավառի ծախսերը 2007 թվականի առաջին կիսամյակում կազմել են ավելի քան 1.5 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրային ցուցանիշի 76.9% կատարում: Ոլորտի ֆինանսավորումը հիմնականում իրականացվել է արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ էներգետիկայի բնագավառի ծախսերը նվազել են 10.6%-ով՝ հիմնականում պայմանավորված Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրաէներգիայի տեղափոխման սեկտորի վերակառուցման և Ճապոնիայի կառավարության աջակցությամբ իրականացվող համակցված շոգեգազային ցիկլով էներգաբլոկի կառուցման ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերի նվազմամբ:

Էներգետիկայի բնագավառում պետական կառավարում իրականացնող մարմինների պահպանմանը պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 245.9 մլն դրամ՝ ապահովելով 84.3% կատարողական և 2.2%-ով գերազանցելով նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը:

Էլեկտրաէներգետիկայի բնագավառին հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 1.3 մլրդ դրամ կամ ծրագրվածի 88.8%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է Ճապոնիայի կառավարության աջակցությամբ իրականացվող էլեկտրահաղորդման գծերի և բաշխիչ ցանցերի վերականգման և համակցված շոգեգազային ցիկլով էներգաբլոկի կառուցման վարկային ծրագրերի, ինչպես նաև ՀԲ աջակցությամբ իրականացվող վերականգնվող

Էներգետիկայի դրամաշնորհային ծրագրերի կատարողականով, որոնք կազմել են համապատասխանաբար 11.3%, 34.6% և 33.1%: Միաժամանակ, ծրագրվածից ավելին է հատկացվել Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրաէներգիայի տեղափոխման սեկտորի վերակառուցման և ՀԲ աջակցությամբ իրականացվող վերականգնվող էներգետիկայի ծրագրերին, որոնց շրջանակներում ծախսվել է համապատասխանաբար 508.0 մլն դրամ և 381.5 մլն դրամ կամ նախատեսվածից 2.8 և 1.4 անգամ ավելի: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ էլեկտրաէներգետիկայի բնագավառի ծախսերը նվազել են 9.5%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրաէներգիայի տեղափոխման սեկտորի վերակառուցման և Ճապոնիայի կառավարության աջակցությամբ իրականացվող համակցված շոգեգազային ցիկլով էներգաբլոկի կառուցման վարկային ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերի նվազմամբ՝ համապատասխանաբար 45.2 և 73 տոկոսով: Միաժամանակ, զգալի աճ է արձանագրվել ՀԲ աջակցությամբ իրականացվող էլեկտրահաղորդման գծերի և բաշխիչ ցանցերի վերականգնման և Վերականգնվող էներգետիկայի ծրագրերի ծախսերում, որոնք համապատասխանաբար 124.2 և 34.5 տոկոսով գերազանցել են 2006 թվականի համապատասխան ցուցանիշները:

Ատոմային էներգետիկայի բնագավառում 2007 թվականի առաջին կիսամյակի բյուջեով նախատեսվել էր 248.5 մլն դրամ հատկացնել «Հայկական ԱԷԿ» ՓԲԸ-ում աշխատած միջուկային վառելիքի չոր եղանակով պահպանման պահեստարանի կառուցման նպատակով, որն աշխատանքները չկատարելու պատճառով չի ֆինանսավորվել:

2007 թվականի առաջին կիսամյակում գյուղատնտեսության, անտառային և ջրային տնտեսության և ձկնաբուծության բնագավառներին ուղղվել է ՀՀ պետական բյուջեի ծախսերի 3.6%-ը կամ շուրջ 8.8 մլրդ դրամ՝ ապահովելով կիսամյակային և տարեկան ծրագրային ցուցանիշների կատարումը համապատասխանաբար 84.7 և 35.0 տոկոսով: Խմբի բոլոր ենթախմբերում արձանագրվել են Կառավարության ծրագրից որոշակի շեղումներ: Հարկ է նշել, որ վերջիններս հիմնականում պայմանավորված են արտաքին աղբյուրներից ֆինանսավորվող որոշ վարկային և դրամաշնորհային ծրագրերի, ինչպես նաև ոռոգման համակարգի սուբսիդավորման և բույսերի պաշտպանության միջոցառումների ցածր կատարողականով: 2006 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ գյուղատնտեսության, անտառային և ջրային տնտեսության խմբի ծախսերն ընդհանուր առմամբ աճել են 56.6%-ով, որը հիմնականում պայմանավորված է տոհմաբուծության, սերմնաբուծության և այլ ծրագրերի ենթախմբի,

ինչպես նաև ձկնաբուծության և ջրային տնտեսության ենթախմբի ֆինանսավորման աճով, այդ թվում՝ նաև նոր ծրագրերի ֆինանսավորմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում 249.9 մլն դրամ են կազմել գյուղատնտեսության և ջրային տնտեսության ոլորտներում պետական կառավարում իրականացնող մարմինների պահպանման ծախսերը՝ ապահովելով ծրագրվածի 86.4%-ը և նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ 13.9% աճ:

Հողերի բարելավման աշխատանքների գծով ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են 653.0 մլն դրամ, ինչը 35.4%-ով զիջել է ծրագրային ցուցանիշը՝ պայմանավորված Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Ոռոգման համակարգի զարգացման վարկային ծրագրի, գյուղատնտեսական հողատեսքերի պահպանման, բարելավման և ինժեներական կառուցվածքների վերականգնման, ինչպես նաև բնական կերհանդակների (արոտների) բարելավման և ջրարբիացման աշխատանքների ցածր կատարողականով: Մասնավորապես, ՀԲ աջակցությամբ իրականացվող Ոռոգման համակարգի զարգացման վարկային ծրագիրը կատարվել է 65.8%-ով՝ նախատեսված 583.9 մլն դրամի փոխարեն կազմելով 384.4 մլն դրամ: Գյուղատնտեսական հողատեսքերի պահպանման, բարելավման և ինժեներական կառուցվածքների վերականգնման աշխատանքների իրականացման համար հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեից տրամադրվել է 71.4 մլն դրամ կամ նախատեսվածի 47.6%-ը, իսկ բնական կերհանդակների (արոտների) բարելավման և ջրարբիացման աշխատանքների ծախսերը կազմել են 67.4 մլն դրամ կամ նախատեսվածի 56.2%-ը: Նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ այս ենթախմբի ծախսերն ավելացել են 16.3%-ով կամ 91.8 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Ոռոգման համակարգի զարգացման վարկային ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի աճով:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեից ավելի քան 1.2 մլրդ դրամ է ծախսվել ձկնաբուծության և ջրային տնտեսության բնագավառներում՝ 8.1%-ով զիջելով ծրագիրը: Մասնավորապես, Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող պատվարների անվտանգության առաջին և երկրորդ վարկային ծրագրերի շրջանակներում ծախսվել է 513.4 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի կատարումը 83.4%-ով: Իսկ «Որոտան-Արփա-Սևան թունելների շահագործման վարչություն» պետական հիմնարկի պահպանման, «Որոտան-Արփա-Սևան» ջրային համակարգի շահագործման, տեխնիկական վիճակի բարելավման և նորոգման ծրագրով նախատեսված ծախսերը կատարվել են 99.3%-ով: 2006 թվականի առաջին կիսամյակի համեմատ ձկնաբուծության և ջրային տնտեսության ոլորտի ծախսերն ավելացել են շուրջ 2.2

անգամ կամ 674.4 մլն դրամով՝ պայմանավորված «Որոտան-Արփա-Սևան» թունելների շահագործման վարչություն» պետական հիմնարկի պահպանման, տեխնիկական վիճակի բարելավման և նորոգման ծրագրով, ինչպես նաև Պատվարների անվտանգության ծրագրով նախատեսված ծախսերի ավելացմամբ:

Բույսերի պաշտպանության ծրագրերի գծով պետական բյուջեի ծախսերը կատարվել են 64.6%-ով՝ կազմելով 199.9 մլն դրամ: Ենթախմբի ցածր կատարողականը պայմանավորված է բույսերի պաշտպանության միջոցառումների նախատեսված ծավալների թերակատարմամբ: 2006 թվականի առաջին կիսամյակի համեմատ այս ենթախմբի ծախսերն աճել են 20.0%-ով:

Անասնաբուժության և հակահամաճարակային միջոցառումների գծով պետական բյուջեի ծախսերը կատարվել են 73.7%-ով՝ կազմելով շուրջ 843.1 մլն դրամ: Այս միջոցառումների գծով նախատեսված հատկացումներն ուղղվել են թվով 8 ծրագրերի ֆինանսավորմանը, որոնցից 7-ում առկա է շեղում ծրագրված ծախսերից: Ենթախմբում մեծ կշիռ ունեն պատվաստուկների և հակահամաճարակային միջոցառումների համար անհրաժեշտ այլ պարագաների ձեռք բերման նպատակով կատարված ծախսերը: Վերջիններս կազմել են 401.9 մլն դրամ՝ 94.2%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Թռչնագրիային հակազդելու վարկային ծրագիրը կատարվել է 95.6%-ով՝ կազմելով 212.1 մլն դրամ, իսկ նույն վարկային ծրագրին աջակցելու նպատակով տրամադրված ճապոնական դրամաշնորհի հաշվին կատարված ծախսերը կազմել են 4.9 մլն դրամ կամ նախատեսվածի 5.4%-ը: 2006 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ անասնաբուժության և հակահամաճարակային միջոցառումների գծով պետական բյուջեի ծախսերն ավելացել են 45.8%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Թռչնագրիային հակազդելու վարկային ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքներով, որի շրջանակներում նախորդ տարվա առաջին կիսամյակում ծախսեր չէին իրականացվել:

Հաշվետու ժամանակահատվածում անտառային տնտեսության ծախսերը կազմել են շուրջ 507.8 մլն դրամ կամ նախատեսվածի 80.9%-ը: Շեղումը պայմանավորված է անտառապահպանական, անտառվերականգնման և անտառշինական աշխատանքների ցածր կատարողականով: Սակայն 2006 թվականի նույն ժամանակահատվածի նկատմամբ ապահովվել է նշված ծախսերի 38.3% աճ:

Խմբի ծախսերի 58.0%-ը կամ շուրջ 5.1 մլրդ դրամը կազմել են տոհմաբուծության, սերմնաբուծության և այլ ծրագրերի գծով ծախսերը, որոնք 94.4%-ով ապահովվել են կիսամյակային ծրագիրը: Շեղումը հիմնականում պայմանավորված է որոշ վարկային և դրամաշնորհային ծրագրերի, ինչպես նաև ոռոգման համակարգերի սուբսիդավորման

ցածր կատարողականով: Այս միջոցառումների գծով նախատեսված հատկացումներն ուղղվել են թվով 15 ծրագրերի ֆինանսավորմանը, որից 8-ն իրականացվել է արտաքին աջակցությամբ: Ոռոգման համակարգերի սուբսիդավորման գծով նախատեսված շուրջ 1.5 մլրդ դրամի դիմաց տրամադրվել է 1.2 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրվածի 79.4%-ը: 86%-ով են կատարվել Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Գյուղական ձեռնարկությունների և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսության զարգացման ծրագրի ծախսերը, որոնք կազմել են 791.8 մլն դրամ, իսկ նույն վարկային ծրագրին աջակցելու նպատակով տրամադրված ճապոնական դրամաշնորհի հաշվին կատարված ծախսերը կազմել են 14.3 մլն դրամ կամ նախատեսվածի 14.3%-ը: Հաշվետու ժամանակահատվածում ավելի քան 1.1 մլրդ դրամ է տրամադրվել ԱՄՆ կառավարության կողմից՝ «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում, որը կազմել է նախատեսվածի 97.1%-ը: Ճապոնական կառավարության աջակցությամբ իրականացվող «Պարենային արտադրության աճ» ծրագրի շրջանակներում հակահեղեղային և անտառվերականգնման միջոցառումների հետ կապված ծախսերը կազմել են 243.8 մլն դրամ՝ ապահովելով 86.6% կատարողական: Ցածր կատարողական է արձանագրվել նաև Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կողմից Հայաստանի Հանրապետությանը ֆինանսական օգնության կարգով տրամադրված նվիրաբերության միջոցների հաշվին ՀՀ Գեղարքունիքի և Տավուշի մարզերում իրականացվող մարզային զարգացման ծրագրերի գծով, որոնց ծախսերը կազմել են 17.6 մլն դրամ կամ նախատեսվածի 17.5%-ը: Միաժամանակ, նախատեսված ծավալի 34.4%-ով գերազանցում է արձանագրվել Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի և ՕՊԵԿ միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող գյուղական տարածքների տնտեսական զարգացման վարկային ծրագրում, որի շրջանակներում ծախսվել է շուրջ 1.3 մլրդ դրամ: 2007 թվականին ՕՊԵԿ հիմնադրամի աջակցությամբ սկսվել է Արտադրական ենթակառուցվածքների վերականգնման վարկային ծրագրի իրականացումը, որը պետական բյուջեում նախատեսված չէ: Ծրագրի շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում կատարվել են 251.4 մլն դրամի ծախսեր:

2006 թվականի առաջին կիսամյակի համեմատ տոհմաբուծության, սերմնաբուծության և այլ ծրագրերի գծով ծախսերն աճել են 61.6%-ով կամ 1.9 մլրդ դրամով: Աճը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցության աճով՝ գերազանցապես «Հազարամյակի մարտահրավեր» և Արտադրական ենթակառուցվածքների վերականգնման ծրագրերի մեկնարկով:

Արդյունաբերության, հանքային հանածոների (բազառությամբ վառելիքի), շինարարության և բնապահպանության ոլորտների ծրագրերի շրջանակներում 2007

թվականի առաջին կիսամյակի պետական բյուջեից ծախսվել է շուրջ 3.3 մլրդ դրամ կամ ծրագրով նախատեսվածի 78.6%-ը: Ծրագրից շեղումը պայմանավորված է նախագծահետախուզական աշխատանքների և ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի ցածր կատարողականով:

Արդյունաբերության, հանքային հանածոների պաշարների, շինարարության և բնապահպանության բնագավառի ծախսերից շուրջ 791.6 մլն դրամը հատկացվել է պետական կառավարման մարմինների պահպանմանը՝ կազմելով ծրագրով նախատեսվածի 81.5%-ը: Նշված գումարից 10.5 մլն դրամը հատկացվել է ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի մասին օրենքի 9-րդ հոդվածի 18-րդ կետի համաձայն պետական հիմնարկների համար ՀՀ կառավարության որոշմամբ բացված արտաբյուջետային հաշիվների միջոցներից: Նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ ենթախմբի ծախսերն աճել են 1.9%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում լեռնահանքային արդյունաբերության և երկրաբանահետախուզության բնագավառին պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 8.9 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 27.9%-ը: Այն հիմնականում պայմանավորված է ՀՀ բնապահպանության նախարարության արտաբյուջետային միջոցների հաշվին նախատեսված «Աճուրդների կազմակերպման ֆոնդ» ծրագրի և երկրաբանահետախուզական աշխատանքների չկատարմամբ: 2006 թվականի առաջին կիսամյակի համեմատ լեռնահանքային արդյունաբերության և երկրաբանահետախուզության ծախսերն աճել են 2.5 անգամ՝ պայմանավորված 2007 թվականի պետական բյուջեով պահուստային հանքավայրերի գույքագրման աշխատանքների համար գումարի հատկացմամբ: Առաջին կիսամյակում այս նպատակով տրամադրվել է 7.1 մլն դրամ:

Նախագծահետախուզական աշխատանքների համար հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 1.0 մլրդ դրամ՝ ապահովելով նախատեսված ծախսերի 72.2%-ը: Նշված գումարից շուրջ 442.6 մլն դրամը տրամադրվել է նախագծային աշխատանքների ֆինանսավորմանը՝ ապահովելով ծրագրի 86.6%-ով կատարում: 533.9 մլն դրամ տրամադրվել է Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերի ֆինանսավորմանը՝ կազմելով ծրագրային ցուցանիշի 63.3%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արձանագրվել է նախագծահետախուզական աշխատանքների ֆինանսավորման 40% աճ, որը հիմնականում պայմանավորված է Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերի ֆինանսավորման ավելացմամբ: Բացի այդ, ընթացիկ տարվա բյուջեից միջոցներ են հատկացվել նաև համայնքների հատակագծերի մշակման և նախագծման



աշխատանքների ֆինանսավորման նպատակով, որն առաջին կիսամյակում կազմել է 23.8 մլն դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում շուրջ 160.5 մլն դրամ տրամադրվել է բնության հատուկ պահպանվող տարածքների ֆինանսավորման համար՝ կազմելով նախատեսվածի 87.2%-ը: Շեղումը մեծամասամբ պայմանավորված է Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման աշխատանքների ցածր կատարողականով. նախատեսված աշխատանքները չիրականացնելու արդյունքում 21.6 մլն դրամի փոխարեն ծախսերը կազմել են 4.2 մլն դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ բնության հատուկ պահպանվող տարածքների ծախսերը նվազել են 19.4%-ով կամ շուրջ 38.7 մլն դրամով, որը պայմանավորված է Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման և «Սևան» ազգային պարկի պահպանության, պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառատնտեսական աշխատանքների իրականացման համար պետական աջակցության ծախսերի նվազմամբ, ինչպես նաև «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի և «Խոսրովի անտառ» ՊՈԱԿ-ի վարչական շենքերի վերանորոգման ավարտով: Ավարտվել են աշխատանքները նաև մի շարք այլ ծրագրերի շրջանակներում, մասնավորապես, բնության հատուկ պահպանվող նոր տարածքների ստեղծման ծրագրերի մշակման, «Խոսրովի անտառ» և «Շիկահող» պետական արգելոցներին տեխնիկական աջակցության, բնության հուշարձանների գույքագրման, անձնագրավորման և ցանկի հաստատման ծրագրի մշակման ծրագրերը: Հարկ է նշել, որ 2007 թվականի պետական բյուջեից սկսել են ֆինանսավորվել բնապահպանական մի շարք նոր ծրագրեր, մասնավորապես, վարչական օբյեկտների հիմնանորոգման, Էրեբունի արգելոցին տեխնիկական աջակցության և սարքավորումների տրամադրման և «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ում մոնիտորինգի ու հետազոտական կայանի ստեղծման, ՀՀ կենդանիների և բույսերի Կարմիր գրքի լրամշակման և «Սոսու պուրակ» պետական արգելավայրի վերականգնման ծրագրերը, որոնց ֆինանսավորմանն առաջին կիսամյակում ընդհանուր առմամբ ուղղվել է ավելի քան 7.7 մլն դրամ:

Բնապահպանական այլ միջոցառումներին հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 892.9 մլն դրամ, որը կազմում է կիսամյակային ծրագրի 123.8%-ը և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշի 116.7%-ը: Նշված ենթախմբի բարձր ցուցանիշը պայմանավորված է ՀԲ աջակցությամբ իրականացվող բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման ծրագրի վարկային և դրամաշնորհային ծրագրերի ֆինանսավորմամբ, որոնք համապատասխանաբար 46.7 և 16.3 տոկոսով գերազանցել են նախատեսված

կիսամյակային ցուցանիշը և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ապահովել համապատասխանաբար 39.2 և 24.9 տոկոս աճ:

Այլ ծրագրերի շրջանակներում կատարվել են ավելի քան 414.2 մլն դրամի ծախսեր՝ կազմելով ծրագրի 48.1%-ը: Թերակատարումը պայմանավորված է ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսվածից պակաս ծախսերով՝ 499.8 մլն դրամի փոխարեն կատարվել են 163.9 մլն դրամի ծախսեր: Ենթախմբի կատարողականի վրա բացասաբար է անդրադարձել նաև նախորդ բյուջետային տարիներին տրամադրված բյուջետային վարկերի վերադարձից մուտքերի բարձր մակարդակը, որոնք նախատեսված 95.7 մլն դրամի դիմաց կազմել են 204.2 մլն դրամ: Վերջինս պայմանավորված է, մասնավորապես, «Գրեյթ Վելիի» ՀՉ ՍՊԸ-ի կողմից նախատեսվածից ավել՝ 46.4 մլն դրամի փոխարեն շուրջ 106.8 մլն դրամ վճարումներով, ինչպես նաև «Հայագրոբանկ» ԲԲԸ-ի կողմից շուրջ 50.9 մլն դրամ և «Լինսի» հիմնադրամի կողմից ֆինանսավորված վարկային ծրագրի վարկառուներից 2 մլն դրամ վճարումներով, որոնց գծով բյուջեում մուտքեր չեն նախատեսվել: Ծրագրվածից 24.4%-ով ավելին են կազմել ՀԲ աջակցությամբ իրականացվող «Ձեռնարկությունների ինկուբատոր» վարկային ծրագրի շրջանակներում կատարված ծախսերը՝ նախատեսված ավելի քան 149.6 մլն դրամի դիմաց կատարվել են շուրջ 186.2 մլն դրամի ծախսեր: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ տվյալ ենթախմբի ծախսերը կրճատվել են 17.9%-ով կամ շուրջ 90.2 մլն դրամով՝ պայմանավորված ՀԲ աջակցությամբ իրականացվող «Ձեռնարկությունների ինկուբատոր» վարկային ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի նվազմամբ և Օտարերկրյա ներդրումների և արտահանման խթանման վարկային ծրագրի ավարտով, ինչպես նաև վերադարձված վարկերի աճով:

2007 թվականի առաջին կիսամյակում տրանսպորտի, ճանապարհային տնտեսության և կապի բնագավառներին ուղղվել է ՀՀ պետական բյուջեի ծախսերի 6.6%-ը կամ շուրջ 16.2 մլրդ դրամ՝ ապահովելով կիսամյակային և տարեկան ծրագրային ցուցանիշների կատարումը համապատասխանաբար 78.0 և 45.2 տոկոսով: Շեղումը հիմնականում պայմանավորված է ճանապարհային տնտեսության բնագավառի ծրագրերի ցածր կատարողականով: Սակայն հարկ է նշել, որ 2006 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ ճանապարհային տնտեսության ուղղությամբ բյուջեի ծախսերն էականորեն ավելացել են, ինչի արդյունքում տրանսպորտի, ճանապարհային տնտեսության և կապի բնագավառի ծախսերն աճել են 39.7%-ով կամ շուրջ 4.6 մլրդ դրամով:

Հաշվետու ժամանակահատվածում 324.2 մլն դրամ հատկացվել է տրանսպորտի և կապի ոլորտներում պետական կառավարում իրականացնող մարմինների՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության և ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության պահպանմանը և վարչական օբյեկտների հիմնանորոգմանը, որոնց ծրագիրը կատարվել է 78.5%-ով: Նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ նշված մարմինների ծախսերն աճել են 87.0%-ով կամ 150.8 մլն դրամով:

Ավտոմոբիլային և քաղաքային էլեկտրական տրանսպորտի բնագավառի ծախսերը կազմել են շուրջ 592.7 մլն դրամ՝ ամբողջությամբ ապահովելով ծրագրի կատարումը: Մասնավորապես, 310.0 մլն դրամ հատկացվել է Երևանի մետրոպոլիտենի սուբսիդավորմանը, 138.0 մլն դրամ՝ Երևանի էլեկտրատրանսպորտի սուբսիդավորմանը, 144.7 մլն դրամ՝ «Կ. Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից 01.10.99թ.-01.01.02թ. ժամանակահատվածում անվճար և զեղչ սակագներով ծառայություններ մատուցելու հետևանքով չստացած եկամուտների (առաջացած վնասների) փոխհատուցմանը: 2006 թվականի առաջին կիսամյակի համեմատ ավտոմոբիլային և քաղաքային էլեկտրական տրանսպորտի ծախսերը նվազել են 50%-ով կամ 591.7 մլն դրամով: Ծախսերի անկումը հիմնականում պայմանավորված է այս ոլորտում 2006 թվականին Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերի իրականացմամբ, որոնց գծով ՀՀ 2007 թվականի պետական բյուջեով միջոցներ չեն նախատեսվել, ինչպես նաև Երևանի մետրոպոլիտենի սուբսիդավորման կրճատմամբ:

Տրանսպորտի, ճանապարհային տնտեսության և կապի ծախսերի գերակշիռ մասը՝ 93.0%-ը ճանապարհային տնտեսությանն ուղղված գումարներն են, որոնք հաշվետու ժամանակահատվածում կազմել են ավելի քան 15.0 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրային հատկացումների 77.1%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգման և Երևանի համաքաղաքային նշանակության ծրագրերի շրջանակներում իրականացված աշխատանքների ծավալով: Նշված ծրագրերի շրջանակներում տրամադրվել է համապատասխանաբար 4.8 և 2.9 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 64.5 և 65.8 տոկոսը: Ցածր կատարողական է գրանցվել նաև ՀԲ աջակցությամբ իրականացվող երթևեկության կառավարման և անվտանգության դրամաշնորհային ծրագրի և Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կողմից տրամադրված նվիրաբերության միջոցների հաշվին ՀՀ Գեղարքունիքի և Տավուշի մարզերում իրականացվող մարզային զարգացման ծրագրերի գծով, որոնք կազմել են համապատասխանաբար 47.4 մլն և 78.2 մլն դրամ կամ նախատեսվածի 29.3%-ը և 68.0%-ը: Բացի այդ, որոշակի շեղումներ են արձանագրվել նաև Հայաստանի

Հանրապետության համայնքային բյուջեներին սուբվենցիաների տրամադրման, պետական նշանակության ավտոճանապարհների պահպանման և շահագործման, տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման, ինչպես նաև տեղական (մարզային) նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանման, ընթացիկ պահպանման և շահագործման ծրագրերի գծով, որոնց կատարողականները կազմել են համապատասխանաբար 92.9%, 95.3%, 82.4%, և 82.9%: Հաշվետու ժամանակահատվածում «Լինսի» հիմնադրամի տրամադրած դրամաշնորհների հաշվին իրականացվող «Ճանապարհների հիմնանորոգում» և «Երևանի փողոցների վերանորոգում» ծրագրերի շրջանակներում իրականացվել են համապատասխանաբար 1.1 մլրդ և 2.0 մլրդ դրամ ծախսեր, որոնք բյուջեով չէին նախատեսվել: Ծրագրի ավելի քան կրկնակի գերազանցում է արձանագրվել ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի գծով, որոնք կազմել են 262.1 մլն դրամ՝ նախատեսված 127.1 մլն դրամի փոխարեն: 2006 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ ճանապարհային տնտեսության ծախսերն աճել են 48.3%-ով կամ շուրջ 4.9 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է Լինսի հիմնադրամի միջոցներով իրականացվող «Ճանապարհների հիմնանորոգում» և «Երևանի փողոցների վերանորոգում» ծրագրերի հիմնական աշխատանքները սկսելու հանգամանքով և Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերի աճով, ինչպես նաև համայնքներին տրամադրվող սուբվենցիաների ավելացմամբ:

2007 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կապի բնագավառում կատարվել են 211.5 մլն դրամի բյուջետային ծախսեր, որը որպես պետական աջակցություն հատկացվել է «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին Հայաստանի հանրային ռադիոյի ծրագրի սփռումն ապահովող միջոցառումների իրականացման նպատակով և ամբողջությամբ ապահովել նախատեսված ծավալը: 2006 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ նշված ծախսերն ավելացել են 2.9 անգամ:

2007 թվականի առաջին կիսամյակում տնտեսական այլ ծառայությունների ծրագրերի գծով ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 1.5 մլրդ դրամ՝ ապահովելով կիսամյակային ծրագրի կատարումը 80.4%-ով: Շեղումը հիմնականում պայմանավորված է նյութական ռեսուրսների պետական պահուստների ձևավորման ու պահպանման և ընդհանուր բնույթի տնտեսական այլ ծառայությունների ծրագրերի կատարողականով: 2006 թվականի առաջին կիսամյակի համեմատ տնտեսական այլ ծառայությունների ծախսերն ավելացել են շուրջ 9.5%-ով կամ 128.1 մլն դրամով:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեից ավելի քան 148.1 մլն դրամ հատկացվել է առևտրի, սպասարկումների, մատակարարման գործունեության և ընդհանուր բնույթի տնտեսական ծառայությունների բնագավառում պետական կառավարմանը՝ ապահովելով կիսամյակային ծրագրի 87.3% կատարողական: Մասնավորապես, 52.6 մլն դրամ՝ նախատեսվածի 81.5%-ը, ուղղվել է «ՀՀ պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ի սուբսիդավորմանը, շուրջ 88.0 մլն դրամ՝ «Սպասարկում» ՊՈԱԿ-ի սուբսիդավորմանը, որը կատարվել է նախատեսված ամբողջ ծավալով, իսկ 7.5 մլն դրամը՝ Առևտրի համաշխարհային կազմակերպության հետ անդամակցային պարտավորությունների իրականացմանը, որը կատարվել է 43.9%-ով:

Նյութական ռեսուրսների պետական պահուստի ձևավորման և պահպանման ծախսերը կազմել են ավելի քան 1.0 մլրդ դրամ՝ ապահովելով նախատեսվածի 84.0%-ը և 3.9%-ով կամ 38.1 մլն դրամով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը:

Հաշվետու ժամանակահատվածում զբոսաշրջիկության ոլորտին պետական աջակցության նպատակով տրամադրվել է շուրջ 82.0 մլն դրամ կամ նախատեսվածի 76.8%-ը: Տրամադրված միջոցներն ուղղվել են ՀՀ զբոսաշրջիկության զարգացման պետական ծրագրի շրջանակներում ՀՀ 2007 թվականի զբոսաշրջության զարգացման ծրագրի ֆինանսավորմանը, որը կատարվել է 100%-ով, իսկ ՀՀ զբոսաշրջիկության զարգացման պետական ծրագրի շրջանակներում «Ծաղկաձորը՝ միջազգային չափանիշներին համապատասխանող զբոսաշրջության կենտրոն» նպատակային խնդիրների լուծման ծրագիրը կատարվել է 69.4%-ով՝ կազմելով 56.2 մլն դրամ: Նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ զբոսաշրջության ծախսերն ավելացել են 52.3%-ով:

Ընդհանուր բնույթի տնտեսական այլ ծառայությունների գծով նախատեսված շուրջ 358.5.0 մլն դրամի դիմաց ծախսերը կազմել են 236.0 մլն դրամ՝ ապահովելով 65.8% կատարողական: Այս միջոցառումների գծով նախատեսված հատկացումներն ուղղվել են թվով 7 ծրագրերի ֆինանսավորմանը, որոնցում մեծ տեսակարար կշիռ ունի «Հայաստանի հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայություն» ՊՈԱԿ-ի սուբսիդավորմանն ուղղված գումարը, որը կատարվել է 100%-ով՝ կազմելով 136.8 մլն դրամ: Ենթախմբի 6 ծրագրերի գծով արձանագրվել են ծրագրից շեղումներ, իսկ 2 ծրագրերի գծով («Պետական աջակցություն ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության «Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից միասնականության ապահովման աշխատանքների կատարում» և «Հիդրոոդերևութաբանական կայանների տեխնիկական վերազինում») աշխատանքներ չեն իրականացվել: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այս ենթախմբի ծախսերն ավելացել են 28.5%-ով կամ շուրջ 52.3 մլն դրամով:

2007 թվականի առաջին կիսամյակում պետական բյուջեի հիմնական խմբին չդասվող ծախսերի գծով փաստացի վճարումները կազմել են շուրջ 25.9 մլրդ դրամ կամ ծրագրի 76.7%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի և պետական պարտքի սպասարկման ծախսերի տնտեսամամբ: Նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ հիմնական խմբին չդասվող ծախսերն աճել են 53.2%-ով կամ շուրջ 9.0 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է պահուստային ֆոնդից կատարված ծախսերի և համայնքներին տրամադրված տրանսֆերտային վճարումների ավելացմամբ:

Պետական պարտքային պարտավորությունների սպասարկմանը հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 4.2 մլրդ դրամ, որը ծրագրից պակաս է 19.3%-ով՝ հիմնականում պայմանավորված պետական պարտատոմսերի ծրագրված հետգումների պակաս կատարմամբ: Ներքին պարտքի սպասարկման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 2.5 մլրդ դրամ՝ նախատեսված 2.9 մլրդ դրամի դիմաց: Արտաքին աղբյուրներից ստացված վարկերի սպասարկմանը հատկացվել է շուրջ 1.7 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 93.5%-ը: Մասնավորապես, 1.4 մլրդ դրամ է կազմել միջազգային կազմակերպություններից, 281.7 մլն դրամ՝ օտարերկրյա պետություններից ստացված վարկերի սպասարկումը: 10.2 մլն դրամ հատկացվել է պետական բյուջեից բռնագանձված գումարների դիմաց տրամադրված մորհակների սպասարկմանը, ինչը 2.5 անգամ գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը: 2006 թվականի առաջին կիսամյակի համեմատ պետական պարտքային պարտավորությունների սպասարկման ծախսերը նվազել են 5.4%-ով կամ 237.5 մլն դրամով:

Հաշվետու տարվա առաջին կիսամյակում տեղական ինքնակառավարման մարմիններին տրանսֆերտային վճարումներն ամբողջությամբ ֆինանսավորվել են, որոնք կազմել են շուրջ 9.3 մլրդ դրամ և 24.6%-ով գերազանցել նախորդ տարվա հատկացումները: Մասնավորապես, 9.0 մլրդ դրամ են կազմել ֆինանսական համահարթեցման նպատակով տեղական ինքնակառավարման մարմիններին տրամադրվող դոտացիաները, որոնք նախորդ տարվա համեմատ ավելացել են 23.3%-ով: 60.0 մլն դրամի չափով միջոցներ են հատկացվել Երևանի քաղաքապետարանին՝ ինքնակամ կառուցված շենքերի և շինությունների օտարման ծախսերի ֆինանսավորման նպատակով: Շուրջ 22.1 մլն դրամ են կազմել «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն բնապահպանական ծրագրերի իրականացման համար համայնքներին հատկացված սուբվենցիաները: 89.0 մլն դրամ տրամադրվել է դատական վճիռներով պետության սեփականության իրավունքի ճանաչման և օրինականացման ծախսերին:

Պետական աջակցությունը ՀՀ Արարատի մարզի Բյուրավան համայնքին, Երևան քաղաքի Ավան համայնքին և ՀՀ Վայոց Ձորի մարզի Ազատեկ համայնքին կազմել է համապատասխանաբար 15 մլն, 45 մլն և 6 մլն դրամ:

Հիմնական խմբին չդասվող ծախսերի 48%-ն ուղղվել է այլ ծրագրերի իրականացմանը՝ կազմելով 12.4 մլրդ դրամ: Նշված գումարի գերակշիռ մասը կազմել են ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից կատարված հատկացումները 9 մլրդ դրամի չափով, որը կազմում է ծրագրված գումարի 55.3%-ը: Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացված ծախսերը Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ ծրագրի գծով կազմել են 500.5 մլն դրամ կամ ծրագրվածից 465.1 մլն դրամ ավելի: Ավելի քան 1.4 մլրդ դրամ են կազմել պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում պետական մասնակցության նվազեցման ճանապարհով ակտիվների կազմից գույք առանձնացնելիս գույքը ստացող պետական կառավարչական հիմնարկների կողմից մատակարարին վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարի փոխհատուցման ծախսերը: Պետական մարմինների կողմից հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների ներկայացնելու համար վճարված պետական տուրքի փոխհատուցման նպատակով հատկացվել է 93.5 մլն դրամ: Շուրջ 166.9 մլն դրամի չափով պետական աջակցություն է ցուցաբերվել «Մեյսմիկ պաշտպանության ազգային ծառայություն» գործակալության ՊՈԱԿ-ներին: Նախորդ բյուջետային տարիներին տրամադրված բյուջետային վարկերի վերադարձից հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջե է մուտքագրվել 27.9 մլն դրամ, որը ծրագրով նախատեսված չէր: Եվս 1.2 մլրդ դրամ հատկացվել է այլ ծրագրերի ֆինանսավորմանը: 2006 թվականի առաջին կիսամյակի համեմատ հիմնական խմբին չդասվող ծախսերի այլ ծրագրերի ֆինանսավորումն ավելացել է շուրջ 2.5 անգամ, որը հիմնականում պայմանավորված է Կառավարության պահուստային ֆոնդից կատարված ծախսերի 3.6 անգամ աճով:

## **ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԸ**

2007 թվականի առաջին կիսամյակում պետական բյուջեն կատարվել է շուրջ 6.5 մլրդ դրամ հավելուրդով՝ նախատեսված 49.9 մլրդ դրամ պակասուրդի փոխարեն: Նշենք, որ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում բյուջեն կատարվել էր 8.4 մլրդ դրամ պակասուրդով: Հավելուրդը հիմնականում առաջացել է եկամուտների ծրագրի գերազանցման և ծախսերի ծրագրի ցածր կատարողականի արդյունքում, ինչի հետ կապված՝ չեն օգտագործվել առևտրային կազմակերպություններում պետական բաժնեմասի մասնավորեցումից ստացված միջոցները՝ նախատեսված 19.1 մլրդ դրամի չափով, ինչպես նաև ծախսերի սեզոնային հարթեցման նպատակով նախատեսված բյուջետային ազատ միջոցները՝ 22.1 մլրդ դրամի չափով, որի փոխարեն գրանցվել է նշված միջոցների 25.9 մլրդ դրամով ավելացում:

Պետական արժեթղթերի հաշվին բյուջեի պակասուրդը ֆինանսավորվել է 95.8%-ով՝ կազմելով 924.3 մլն դրամ: 1.5 մլրդ դրամ է կազմել զանձապետական պարտատոմսերից զուտ մուտքը՝ նախատեսված մոտ 1.6 մլրդ դրամի փոխարեն: 2006 թվականի առաջին կիսամյակի համեմատ պետական պարտատոմսերի հաշվին պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորումը կրճատվել է 36.4%-ով կամ 2.6 մլրդ դրամով: Մուրհակների մարմանը հաշվետու կիսամյակում ուղղվել է 576.7 մլն դրամ՝ ապահովելով նախատեսված ծավալի 94.5%-ը: Պետական ներքին շահող փոխառության պարտատոմսերի հետ գնման նպատակով հատկացվել է 788.8 հազ. դրամ՝ նախատեսված 10.0 մլն դրամի դիմաց:

Անցած ժամանակահատվածում նախատեսվել էր շուրջ 22.1 մլրդ դրամի բյուջետային ազատ միջոցների օգտագործում, սակայն փաստացի արդյունքներով բյուջեի ազատ միջոցներն ավելացել են 25.9 մլրդ դրամով:

2007 թվականի առաջին կիսամյակում արտաքին աղբյուրների հաշվին պետական բյուջեի պակասուրդը ֆինանսավորվել է շուրջ 18.5 մլրդ դրամով՝ նախատեսված 7.7 մլրդ դրամի դիմաց: Արտաքին աղբյուրներից պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման բարձր ցուցանիշը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀԲ կողմից Աղքատության կրճատման աջակցության երրորդ ծրագրի շրջանակներում նախորդ տարի նախատեսված վարկի մասնաբաժինը տրամադրվել է ընթացիկ տարում: Առանց նշված վարկի արտաքին ֆինանսավորման կատարողականը կազմում է 107.8%:

Ընդհանուր առմամբ հաշվետու ժամանակահատվածում արտաքին աղբյուրներից ստացվել են 23.4 մլրդ դրամի վարկային միջոցներ՝ նախատեսված 10.5 մլրդ դրամի փոխարեն: Նպատակային վարկային ծրագրերի շրջանակներում 11.5 մլրդ դրամը ստացվել է միջազգային կազմակերպություններից և 1.2 մլրդ դրամը՝ օտարերկրյա պետություններից,



որոնք կազմել են ծրագրված միջոցների համապատասխանաբար 107.6 և 92.9 տոկոսը: Շեղումը հիմնականում առաջացել է ճապոնիայի կառավարության աջակցությամբ իրականացվող էլեկտրահաղորդման գծերի և բաշխիչ ցանցերի վերականգնման և համակցված շոգեգազային ցիկլով էներգաբլոկի կառուցման ծրագրերի գծով: Նշված երկու ծրագրերի շրջանակներում օգտագործվել է 131.2 մլն դրամ՝ նախատեսված 660.9 մլրդ դրամի դիմաց:

Արտաքին պարտքի մարմանը հաշվետու ժամանակահատվածում հատկացվել է 3.2 մլրդ դրամ կամ նախատեսվածի 98.6%-ը: Մասնավորապես, 1.4 մլրդ դրամ հատկացվել է Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎՋԵԲ), 1.3 մլրդ դրամ՝ Համաշխարհային բանկի, 410.9 մլն դրամ՝ ԱՄՆ կառավարության նկատմամբ ունեցած պարտավորությունների մարմանը, 47.8 մլն դրամ՝ Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի և 5.2 մլն դրամ Ֆրանսիայի կառավարության նկատմամբ ունեցած պարտավորությունների մարմանը: Նշենք, որ վճարումներն իրականացվել են սահմանված ժամանակացույցին համապատասխան և ամբողջ ծավալով:

Արտաքին աղբյուրներում ներառված՝ վարկային և դրամաշնորհային միջոցների մնացորդների փոփոխությունը կազմել է ավելի քան 1.6 մլրդ դրամ, այսինքն՝ նշված չափով ավելացել են վարկային և դրամաշնորհային ծրագրերի կատարման ընթացքում առաջացած ազատ միջոցները: